49ՐԴ ՏԱՐԻ ԹԻՒ 1208 Կ. ՊՈԼԻՍ ՇԱԲԱԹ 4/17 ՅՈՒՆԻՍ 1905 13 ՐԷՊԻԼ, ԱԽԸՐ 1323 – 4 ՀԱԶԻՐԱՆ 1321

Journal Arménien
MANZOUMÉ-I-EFKIAR
Grand' Rue de la S-Porte,
CONSTANTINOPLE

ՏԷՐ ԵՒ ՏՆՕՐԷՆ
ՅՈՎՀԱՆՆԷՍ Ֆ. ԳԱՅԱԷՐԵԱՆ
ՈՐՈՒ Կ'ՈՒՂՂՈՒԻ ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԳՐՈՒԹԻՒՆ
ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ
38, Գալաթ Սկի Ճամասէպի, 38
Խմբագրութեան ուղղուած գրութիւններ կամ չեն տրուիր

Մանկունեաց Էֆքիար

ՀԱՅԱԳԻՏԵՐԻ ԱԴԱՒՕՏԵԱՆ

ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

منظومهٔ افکار
ارمنیه یوی وسیاسی غزیتهدر
صاحب امتیازی : اوهانس قریب
اداره‌خانه‌سی باب‌عالی جادهسنده نومرو ۳۸

ԳԱԳԻԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

	Տարեկան	Վեցամսեայ
Պոլսոյ համար	80 ղր.	50 ղր.
Դուռառներու համար	108 »	60 »
Արտասահմանի համար	25 ֆր.	18 ֆր.

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ
Մէկ անգամի համար, տողը 5 ղրուշ
Մէկ անգամէ աւելի ծանուցմանց համար մասնաւոր պայմաններ

10 ՓԱՐԱ — ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ "ՄԱՆԶՈՒՄԷ„ ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԷՆ ՕՐ ԱՐՇԱԼՈՅՍԻՆ — 10 ՓԱՐԱ

ՕՐՈՒԱՆ ՄՏԱԾՈՒՄՆԵՐ

Մրցումը Ամուսիններու Միջեւ

Նոր բան մը չէ երկու ամուսիններու իրարու հետ չափուիլը. հարիւրաւոր ընտանիքներ կան այսօր, ուր երիկը մէկ կողմէն կ'աշխատի իր կամքը առաջ վարելու, կինն ալ միւս կողմէն։ Երբ պարոնը ճերմակ ըսէ, տիկինը կը պնդէ սեւին վրայ ու ասկէ կը ծագին անդադարութիւններ, կագեր ու կռուիներ՝ յաճախ ընտանեկան յարկը խախտելու սպառնան սոսկալիօրէն։ Եթէ երկու ամուսիներէն մէկը նիւթապէս կախում ունի միւսէն, այն ատեն աւելի բացայայտ կերպով կը նշմարուի խօսքը քալեցնելու ոգին, ու գերակշիռ եղողը՝ տիրական հովեր առած՝ միշտ կը ջանայ չկոծանցնել կենակից ամուսնոյն կարգադրութիւններն ու որոշումները՝ բոլորովին հակառակը գործադրել տալով անոնց տեղ։ Զրկուած անպատուուած կողմն ալ սակայն պարապ չի կենար. վիրաւորուած արժանապատուութիւնը կը պոռթկայ անոր հոգիին խորերուն մէջ ու եթէ խոհեմութիւնն ու կախումը պահ մը ստիպեն զայն լռելու, վրէժխնդրութեան հուրը կը բոցավառի, կը բռնկի ու կը սասկանայ, յարմար առիթով մը ահռելի կերպով պայթելու պատրաստ։

Դժոխքը բան մը չէ, մրցակից ամուսիններու ընտանիքին հետ բաղդատմամբ. այրը ո՛ւչափ որ ծախէ, կինը զայն գերազանցելու ձիգով անոր եռապատիկը կը շռայլէ և եթէ պարոնը ունի մոլութիւններ ու մեղանչումներ ընտանեկան սրբութեան դէմ, կինը արձակ համարձակ տրամադրելի կ'ընէ իր նուիրականութիւնն ու պատիւը՝ միշտ երիկը գլել անցնելու մոլուցքով։

Կեանքի պայքարին տակ ընկճած, ապրելու հոգովը ստղրուած ամուսինները որոնք միջակարար դասակարգը կը կազմեն, բարեբախտաբար մեծ մասամբ զերծ են այս մրցակցութիւնէն և իրենց համար այնչափ կարեւորութիւն չունի խօսքը քալեցնելու առաջնութիւնը, ո՛ւրչափ բարեկիցիկ կեանք մը ապահովելու մտածումն ու անդոսա գործունէութիւնը։

Կռնակը տաք փորը կուշտերուն վրայ պէտք է փնտռել այս մնաւոր մոլութիւնը որ երբ սկսի, այլեւս չկրնար վերջանալ, մինչեւ որ անտանելի չդարձնէ ընտանիքին կեանքը։

Ամէն առթիւ կռիւը պակաս չէ այլ եւս այն ընտանիքին մէջ. ամենաչնչին պատճառ մը մեծ փոթորիկներ կը յարուցանէ և երկու ամուսիններ եթէ մրցակցութիւնը գանակոծութեան աստիճանին չհասցնեն, լեղուագարութիւնն ու անպատշաճ արտասանութիւնները իրենց ծայրայեղութեան կը տանին։ Ճաչերը օր ընդմէջ կը համեմուին երկու ամուսիններու փոխադարձ ակնարկութիւններով ու նախատական արհամարհանքով և ծառաներն ու սպասաւորները՝ որ յաճախ ականատես կ'ելլան այս գայթակղական տեսարաններուն, ո՛չ նուազ ծանր դերեր կը կատարեն գժտութիւնը մ'աւելի արծարծելու և իրենց անձնական դիրքն ու շահը ապահովելու համար։

Հեռուէն կը տեսնէք զոյգեր, որոնք վերջին նորաձեւութեան համեմատ հագուած՝ բաց կառքերու մէջ բազմած՝ կ'անցնին փողոցներէն, հիացում ու նախանձ առթելով բոլոր զիրենք դիտողներուն։ Հարուստ, ճոխ ու բարգաւաճ ընտանիքներ են անոնք որոնց վրայ չնախանձիլ անկարելի է, և սակայն անգամ մը մօտէն քննեցէք ա՛նոնցմէ շատին ներքին կեանքը, հետտամուտ եղէք այն ճոխաբար սնունդ ցողներու ընտանեկան կենցաղին ու ապրելակերպին, ո՛հ, անմիջապէս պիտի յիշէք հանրածանօթ առածը կրածեփ գերեզմաններուն, որոնց ներքինը բնաւ չհամեմատիր արտաքինին, և արձանագրով ու մարմարեայ շքեղ վերտառութիւններով կանգնուած այն հոյակապ շէնքերուն ներքին մասերը լեցուն են դարշ աղտեղութիւններով ու զազիր իրերով։

Զատուելու ոգին աւելի այն ամուսիններուն համար բնական է ու սովորական, երբ կրթեալ, արժանաւոր բայց նիւթականէ զուրկ երիտասարդ մը փեսայ կ'երթայ հարուստ, անուս ու չտես աղջկան մը հօր տունը։ Համբաւասիրութիւն, սէր, ճաշակ բնաւ գործ չունին այլ եւս երկու ամուսիններուն մէջեւ. փեսան ամէն օր մէկ մէկ անկրթութիւնն ու չտեսութիւնը նշմարելով ամուսնոյն, կը ջանայ իր ուղղութեամբ դասատարակել զայն, մինչդեռ այս վերջինը յաւէտ երեսասպարտ նկատելով էրիկը իրեն, կ'ուզէ ծառայէ վեր դիրք մը միայն տալ անոր ու ամէն առթիւ իր կամքին հպատակեցնել։ Աղջկան ծնողքն ալ ուրիշ կերպ չեն մտածեր. անոնց համար գոյութեան առաջին պայմանը դրամն է և նիւթականով է որ կը չափեն ո՛ւ է մէկու արժէքը. հետեւաբար երբ նիւթապէս հարիւրապատիկ բարձր են իրենց փեսէն, կը փափաքին որ անիկա խոնարհի իրենց առջեւ, հլու հպատակը ըլլայ կնկանը ու տէրը տեսած սկուռնդի մը նման քնի զուքանչին ու աներոյնը առջեւ, բարեբախտութիւն սեպելով իրենն՝ այն սեմէն ներս ընդունուիլը։

Եւ սպասեցէք որ երջանիկ ըլլան այս զիրար հակասող ամոլները։ Ճաշակի տարբերութիւնը, մտածելու հեռաւորութիւնն ու գաղափարներու հիմնական անհամաձայնութիւնը կը շեշտուին ամէն առթիւ։ Էրիկը նուրբ ու տժգոյն կերպասէ մը կ'ընտրէ կնկանը հագուստը, մինչդեռ անիկա դեռ վառ գոյներէն չկրնալով կարօտը առնել՝ շռայլաբար շողշողուն կը հակի և ծնողքն ալ բնականաբար նախապատուութիւնը իրենց աղջկան ճաշակին կուտան որ միւսնոյն ժամանակ իրենցն ալ է. այս աննչան պարագայն հակառակութիւնը կը ծագի, երկու ամուսիններն ալ կը ջանան իրենց խօսքը առաջ տանիլ։ Փեսան կնկանը ազատութիւնը, չտեսութիւնն ու յոռի ճաշակը երեսին կը զարնէ, ինչ որ ա՛լ աւելի կը գրգռէ տիկինը և կ'սկսի արհամարհել էրիկը թէ, առանց զրպանը հինգ փարա ուներ՝ ծակ կոշիկներով տուն փնտռելու՝ ծակ կոշիկներով տուն փնտռելու ու հիմա որ փորը կշտացաւ ամուսնացող երիտասարդն ալ վարանում կարգ անցաւ, գլխունք անպատուելու կ'ելլայ։ Նոյնը կը կրկնուի նաև կարասիներու ընտրութեան, գիւղացուութեան, հիւրամեծարութեան և վերջապէս ընտանեկան ամէն խնդիրներու առթիւ, ուր տրամաբանութիւնը, դատողութիւնը կը դադրին այլ եւս գոյութիւն ունենալէ և երկու ամուսիններու միակ ձիգը կ'ըլլայ իր խօսքը քալեցնելու, իր ըսածը ընել տալու աւելորդ յամառութիւն մը։

Ընտանեկան վէճերն ու անհամաձայնութիւնները լուծել չգնալէ առաջ, անհրաժեշտ է ուսումնասիրել անոնց պատճառները, որոնք հարիւրին իննսունը հինգ ասանկ չնչին բաներ են։ Փոքրիկ անհամաձայնութիւն մը կը ծագի երկու ամուսիններու միջեւ, որոնք իրենց արժանապատուութիւնը վիրաւորած զգալով կը ջանան գլուխ չծռել։ Առջի ամիսներու երեւակուելներն ու սքողուած ակնարկութիւնները հետզհետէ կռիւի ու կատաղի պայքարներու կը փոխուին ու ասկէ կ'սկսի հիմնական ատելութիւն մը երկու ամոլներուն միջեւ։ Մէկը ինչ որ ընէ, միւսը անպատճառ անոր հակառակը կը գործէ և մէկը ո՛ւրչափ որ առաջանայ մոլութեան մը մէջ, միւսը կը ջանայ միշտ զայն գերազանցել ու ետ չմնալ մրցումի ասպարէզէն։ Ինչ դառն մրցում սակայն. խօսքը գործի կը փոխուի և անբասիր կեանք ուխտող ամոլներ ակամայ կ'ենթարկուին զայրոյթի այնպիսի հոսանքի մը որ յաճախ կը փճացնէ զիրենք նիւթապէս ու բարոյապէս։ Ամէնէն աւելի փոքրիկներն են որ կը տուժեն իրենց ծնողաց յիմար մրցակցութենէն. հայրիկը՝ մայրիկը կ'անպատուէ և մայրիկն ալ հայրիկը. արդ՝ երկու անպատիւ ծնողները ինչ իրաւունքով յարգանք պիտի սպասեն իրենց զաւակներէն։ Տուներ կան ուր քսան երեսուն տարուց կենակցութենէ ետք իսկ յոռի մրցակցութեան ոգին չէ մարած երկու անշէջ ամուսիններու միջեւ, ու յաճախ անոնց չափահաս զաւակները զգածուելով տիրող խայտառակութենէն, զգաստութեան հրաւիրելու կ'ելլեն իրենց խեւ ծնողները։

Դաստիարակութեան պակասին պիտի վերագրէինք այս տխուր երեւոյթը եթէ դաստիարակուած (.՞) ամուսիններու միջեւ ատելի յաճախադէպ չըլլար յոռի մրցումը։ Դժբախտաբար մեր զարգացած դասակարգն է որ ամէնէն աւելի թատր կը հանդիսանայ այս կարգի տխուր տեսարաններու։ Քու խօսդդ չպիտի ըլլայ, ահաւասիկ բանաձեւ մը որուն կը զոհուին շատ անգամ, ամէնէն նուիրական կարծուած ճշմարտութիւններն անգամ։ Խօսքը ինչ արժէք ունի, բաւական է որ արդարացի ըլլայ առաջարկը և ճշմարտութեան վրայ հիմնուած։ Այո՛, ասիկայ տոյդ է, սակայն պաղարիւնով խորհողներու համար. բորբոքած ամուսինները ատանկ բան մտիկ չեն ըներ և չեն ամչնար զիրար նախատելու երկու օրուան եկած ծառաներու, սպասաւորներու և խոհարարներու առջեւ։

Շնորհալի աղջիկ մը որ բնութեան ամէն առաւելութիւններով օժտուած էր, մեծժուռեցաւ արժանաւոր ու նախանձելի երիտասարդի մը կողմէ, միայն անոր համար որ, աղջկան խառնարարը տղուն տան մէջ կը պաշտօնավարէր և իր երիտասարդ տիրոջ պատմած էր թէ, առաջարկուած օրիորդին ծնողքը ի՛նչ ծանր կռիւներ կ'ընէին սեղանին վրայ և թէ իրարմէ վրէժ լուծելու համար ի՛նչ անխոստովանելի մրցակցութեան կը դիմէին։

Մարդուս մարմինը կը փչաքաղի այս կարգի պատմութիւններ լսելով և սակայն ի՞նչ օգուտ որ իրողութիւններն են անոնք և կատաղի ծնողներու անհեռատեսութեան ու ստորնութեան շնորհիւ հանրութեան մէջ տարաձայնութելով կը խորտակեն անոնց անմեղ զաւակներուն ապագան։

Ինչ յանցանք ունի հիմա այս ասնառակ ամուսիններու աղջիկը։ Ինչո՞ւ զրկուէր ամէն արժանիք իր վրայ մարմնացնող երիտասարդէ մը, երբ ինքն ալ անկէ նուազ արժանաւոր չէր։ Խոհարարը որ մօտէն կը ճանչնար աղջիկը, անոր դրուատիքը ըրած էր երիտասարդ տիրոջը, ուրիշ բարեկամներ ալ հաստատած էին թէ աղջիկը աղբիւներու մէջ բուսած շուշան մըն էր և թէ ծընողացը անհամերաշխ կեանքը խոր ապատրութիւն ըրած էր վրան. և սակայն երիտասարդը միւս հաստատմացած էր որոշումին վրայ, սա հաւատքով թէ, առանկ ընտանիքէ կին առնելը բախտախաղ մըն է լոկ և թէ ամէն աղջիկ իր մօր ընութիւնն ու բարքերը կ'իւրացնէ աւելի կամ նուազ չափով։

Ի պատիւ օրիորդին, ըսենք նաև թէ անիկայ ամուսնացաւ ուրիշ երիտասարդի մը հետ և հիմա նմանը չը տեսնուած հարմարութիւն կ'ընէ ամուսնոյն բազմադամ ընտանեաց մէջ։ Ա.էյ'կ, բայց եթէ օրիորդին հետ ամուսնացող երիտասարդն ալ վարանում կարգ անցաւ, գլխունք անպատուելու կ'ելլայ։ Նոյնը կը կրկնուի նաև կարասիներու ընտրութեան, գիւղացուութեան, հիւրամեծարութեան և վերջապէս ընտանեկան ամէն խնդիրներու առթիւ, ուր տրամաբանութիւնը, դատողութիւնը կը դադրին այլ եւս գոյութիւն ունենալէ և երկու ամուսիններու միակ ձիգը կ'ըլլայ իր խօսքը քալեցնելու, իր ըսածը ընել տալու աւելորդ յամառութիւն մը։

Ընտանեկան վէճերն ու անհամաձայնութիւնները լուծել չգնալէ առաջ, անհրաժեշտ է ուսումնասիրել անոնց պատճառները, որոնք հարիւրին իննսունը հինգ ասանկ չնչին բաներ են։ Փոքրիկ անհամաձայնութիւն մը կը ծագի երկու ամուսիններու միջեւ, որոնք իրենց արժանապատուութիւնը վիրաւորած զգալով կը ջանան գլուխ չծռել։ Առջի ամիսներու երեւակուելներն ու սքողուած ակնարկութիւնները հետզհետէ կռիւի ու կատաղի պայքարներու կը փոխուին ու ասկէ կ'սկսի հիմնական ատելութիւն մը երկու ամոլներուն միջեւ։ Մէկը ինչ որ ընէ, միւսը անպատճառ անոր հակառակը կը գործէ և մէկը ո՛ւրչափ որ առաջանայ մոլութեան մը մէջ, միւսը կը ջանայ միշտ զայն գերազանցել ու ետ չմնալ մրցումի ասպարէզէն։ Ինչ դառն մրցում սակայն. խօսքը գործի կը փոխուի և անբասիր կեանք ուխտող ամոլներ ակամայ կ'ենթարկուին զայրոյթի այնպիսի հոսանքի մը որ յաճախ կը փճացնէ զիրենք նիւթապէս ու բարոյապէս։ Ամէնէն աւելի փոքրիկներն են որ կը տուժեն իրենց ծնողաց յիմար մրցակցութենէն. հայրիկը՝ մայրիկը կ'անպատուէ և մայրիկն ալ հայրիկը. արդ՝ երկու անպատիւ ծնողները ինչ իրաւունքով յարգանք պիտի սպասեն իրենց զաւակներէն։ Տուներ կան ուր քսան երեսուն տարուց կենակցութենէ ետք իսկ յոռի մրցակցութեան ոգին չէ մարած երկու անշէջ ամուսիններու միջեւ, ու յաճախ անոնց չափահաս զաւակները զգածուելով տիրող խայտառակութենէն, զգաստութեան հրաւիրելու կ'ելլեն իրենց խեւ ծնողները։

Դաստիարակութեան պակասին պիտի վերագրէինք այս տխուր երեւոյթը եթէ դաստիարակուած (.՞) ամուսիններու միջեւ ատելի յաճախադէպ չըլլար յոռի մրցումը։ Դժբախտաբար մեր զարգացած դասակարգն է որ ամէնէն աւելի թատր կը հանդիսանայ այս կարգի տխուր տեսարաններու։ Քու խօսդդ չպիտի ըլլայ, ահաւասիկ բանաձեւ մը որուն կը զոհուին շատ անգամ, ամէնէն նուիրական կարծուած ճշմարտութիւններն անգամ։ Խօսքը ինչ արժէք ունի, բաւական է որ արդարացի ըլլայ առաջարկը և ճշմարտութեան վրայ հիմնուած։ Այո՛, ասիկայ տոյդ է, սակայն պաղարիւնով խորհողներու համար. բորբոքած ամուսինները ատանկ բան մտիկ չեն ըներ և չեն ամչնար զիրար նախատելու երկու օրուան եկած ծառաներու, սպասաւորներու և խոհարարներու առջեւ։

Շնորհալի աղջիկ մը որ բնութեան ամէն առաւելութիւններով օժտուած էր, մեծժուռեցաւ արժանաւոր ու նախանձելի երիտասարդի մը կողմէ, միայն անոր համար որ, աղջկան խառնարարը տղուն տան մէջ կը պաշտօնավարէր և իր երիտասարդ տիրոջ պատմած էր թէ, առաջարկուած օրիորդին ծնողքը ի՛նչ ծանր կռիւներ կ'ընէին սեղանին վրայ և թէ իրարմէ վրէժ լուծելու համար ի՛նչ անխոստովանելի մրցակցութեան կը դիմէին։

Մարդուս մարմինը կը փչաքաղի այս կարգի պատմութիւններ լսելով և սակայն ի՞նչ օգուտ որ իրողութիւններն են անոնք և կատաղի ծնողներու անհեռատեսութեան ու ստորնութեան շնորհիւ հանրութեան մէջ տարաձայնութելով կը խորտակեն անոնց անմեղ զաւակներուն ապագան։

Ի՞նչ յանցանք ունի հիմա այս ասնառակ ամուսիններու աղջիկը։ Ինչո՞ւ զրկուէր ամէն արժանիք իր վրայ մարմնացնող երիտասարդէ մը, երբ ինքն ալ անկէ նուազ արժանաւոր չէր։ Խոհարարը որ մօտէն կը ճանչնար աղջիկը, անոր դրուատիքը ըրած էր երիտասարդ տիրոջը, ուրիշ բարեկամներ ալ հաստատած էին թէ աղջիկը աղբիւներու մէջ բուսած շուշան մըն էր և թէ ծընողացը անհամերաշխ կեանքը խոր ապատրութիւն ըրած էր վրան. և սակայն երիտասարդը միւս հաստատմացած էր որոշումին վրայ, սա հաւատքով թէ, առանկ ընտանիքէ կին առնելը բախտախաղ մըն է լոկ և թէ ամէն աղջիկ իր մօր ընութիւնն ու բարքերը կ'իւրացնէ աւելի կամ նուազ չափով։

Ի պատիւ օրիորդին, ըսենք նաև թէ անիկայ ամուսնացաւ ուրիշ երիտասարդի մը հետ և հիմա նմանը չը տեսնուած հարմարութիւն կ'ընէ ամուսնոյն բազմադամ ընտանեաց մէջ։ Ա.էյ'կ, բայց եթէ օրիորդին հետ ամուսնացող երիտասարդն ալ վարանում կարգ անցաւ, գլխունք անպատուելու կ'ելլայ։ Նոյնը կը կրկնուի նաև կարասիներու ընտրութեան, գիւղացուութեան, հիւրամեծարութեան և վերջապէս ընտանեկան ամէն խնդիրներու առթիւ, ուր տրամաբանութիւնը, դատողութիւնը կը դադրին այլ եւս գոյութիւն ունենալէ և երկու ամուսիններու միակ ձիգը կ'ըլլայ իր խօսքը քալեցնելու, իր ըսածը ընել տալու աւելորդ յամառութիւն մը։

Ինչպէս կարելի է որ երջանիկ ըլլան այս զիրար հակասող ամոլները։ Ճաշակի տարբերութիւնը, մտածելու հեռաւորութիւնն ու գաղափարներու հիմնական անհամաձայնութիւնը կը շեշտուին ամէն առթիւ։ Էրիկը նուրբ ու տժգոյն կերպասէ մը կ'ընտրէ կնկանը հագուստը, մինչդեռ անիկայ դեռ վառ գոյներէն չկրնալով կարօտը առնել՝ շռայլաբար շողշողուն կը հակի և ծնողքն ալ բնականաբար նախապատուութիւնը իրենց աղջկան ճաշակին կուտան որ միւսնոյն ժամանակ իրենցն ալ է. այս աննչան պարագայն հակառակութիւնը կը ծագի, երկու ամուսիններն ալ կը ջանան իրենց խօսքը առաջ տանիլ։ Փեսան կնկանը ազատութիւնը, չտեսութիւնն ու յոռի ճաշակը երեսին կը զարնէ, ինչ որ ա՛լ աւելի կը գրգռէ տիկինը և կ'սկսի արհամարհել էրիկը թէ, առանց զրպանը հինգ փարա ուներ՝ ծակ կոշիկներով տուն փնտռելու՝ ծակ կոշիկներով տուն փնտռելու ու հիմա որ փորը կշտացաւ

ԱՐՏԱՔԻՆ

ԿԱՑՈՒԹԻՒՆԸ

ՌՈՒՍԵՐՁԱԲՈՆԱԿԱՆ ՀԱՇՏՈՒԹԵԱՆ ԺՈՂՈՎԸ

«Նայէ Ֆրայէ Բրեսէ»ի Յունիս 14ի խմբագրականէն

Հիմակ որ Ռուսիա և Ճաբոն հաւասարացան լիազօրներ անուանելու հաշտութեան բանակցութիւնները ուղղակի վարելու համար՝ Բուզվէլթի առաջարկութեան համաձայն, երկրորդ խնդիրը կը մնայ տեղի և ժամանակի ընտրութիւնը։ Այս նպատակի գործողութեանց դիւրութեան համար ալ Բուզվէլթ իր ծառայութիւնը առաջարկած է, եթէ հարկ տեսնուի, ու այս պատճառաւ Ռուսիոյ և Ճաբոնի Ուաշինկթընի ներկայացուցիչները, Ռաքնի և Թաքահիրա, պիտի տեսակցին Ռուզվէլթի աջին տակ։ Զանազան տեղեր կը յիշատակուին լիազօրներուն գումարման իբրեւ հաւաքական կեդրոններ. Զիֆու և Մանչուրիոյ մէջ քաղաք մը, Բարիզ, Ուաշինկթըն, Լա Հէյ։ Թայմզի Բեռլինի թղթակիցը կը հեռագրէ թէ Բուզվէլթի ծրագրածն է՝ հաշտութեան պայմաններուն վրայ բուն խորհրդակցութենց սկսելէն առաջ։ Որովհետեւ տարօրինակ հակասութիւն մը և պատմութեան մէջ մէկհատիկ դէպք մը պիտի ըլլայ եթէ հաշտութեան վրայ բանակցութիւններ կատարուին միւնոյն ժամանակ թնդանօթներուն շարունակեալ կրակին ներքեւ։ Հիմակուընէ իսկ այսպիսի հակասութեան մը հոտը կուգայ, որովհետեւ ուղղակիորէն վրայ կռիւներուն շարունակութեան մասին լուրերը կը հասնին հեռագիրով, իբր թէ հաշտութեան խօսք բնաւ եղած չըլլայ, և այնպէս կ'երեւի թէ գլխաւոր ճակատամարտ մըն ալ տեղի պիտի ունենայ, և այնուհետեւ միայն բանակները իրենց վերջնական դերը Դիւանագիտութեան պիտի յանձնեն։

Իրողութիւնը կեղակարծ պիտի մնայ մինչեւ որ երկու պատերազմիկ Տէրութիւնները պաշտօնապէս յայտարարեն իրենց յօժարութիւնը հաշտութեան բանակցութենց սկսելու։ Որովհետեւ Ճաբոնի կողմէ բանաձեւուած հաշտութեան պայմաններուն պարունակութեան վրայ որոշ և ստոյգ տեղեկութիւն մը չկայ, բնական է թէ յառաջիկայ բանակցութեանց մասին կասկածները մեծապէս աւելցած են, և կամ հետզհետէ կը շատնան այն դժուարութիւնները, որոնց յաղթել պէտք պիտի ըլլայ ամբողջ աշխարհի բաղձացած արդիւնքը ձեռք բերելու համար։ Բայց կէտ մը կայ, որուն պէտք է լաւ ուշադրութիւն ընել.—եթէ Բուզվէլթի գործողութեան շնորհիւ Զարքոյէ-Սէլոյի խորհրդներուն վրայ ճշմարիտ փոփոխութիւն մը առաջ եկած է, եթէ հակառակ Ռուսիոյ վհատեցուցիչ և ամօթալի պարտութիւններուն՝ ռուս կառավարութիւնը միտքը դրած է անխուսափելիին առջեւ գլուխ ծռել, անպատճառ պիտի յաջողի Հաշտութիւնը։ Արդէն այս կէտն ալ քանի մը օրէն կրնայ լուսաբանուիլ, երբ հաշտութեան ժողովին նիստերը սկսին։ Իրաւ է որ ռազմավայրին վրայ երկու ազգին բանակներուն յառաջխաղացութիւնը և նահանջը փոփոխակի կը շարունակուին, քանի որ ա՛յնքան մօտեցած են իրարու, իրաւ է որ զօրավար Լինէվիչ տակաւին Թուրին հետ կը խաղայ, բայց կասկածելի է որ արդարեւ նոր և անուելի ճակատամարտ մը մղուի, և բիւրաւորներ դարձեալ իրենց կեանքը վրայ տան, ինչպէս եղաւ Մուքդէնի առջեւ։ Բուզվէլթեան առաջարկութիւնը դիմամբ վրայ հասաւ ա՛յնպիսի ժամանակի մը մէջ, երբ ռուս զօրավարներուն կողմէ կը փորձուի յուսահատական նոր ճիգ մը բախտին ձեռքէն կողղելու պատերազմական յաղթութիւն մը։ Ռուսիոյ և Ճաբոնի ուղղած իր համիմատ ծանուցագրին մէջ Բուզվէլթ թարգմանը հանդիսացաւ ամբողջ քաղաքակրթ աշխարհի, երբ յայտարարեց թէ հաշտութիւն առաջ բերելու համար իր գործողութիւնը սկսած է «ի չոր ընդհանուր մարդկութեան», որպէս զի «եթէ կարելի ըլլայ, վախճան մը տրուի գարշելի և ողբալի պատերազմին»։ Աւելացուցած էր թէ պատրաստ է ի հարկին ձեռքէն եկածը ընել իր ծառայութիւնը մատուցանելու համար հաշտութեան։ Յայտնեցաւ սա մեծ արդիւնքին մէջ թէ Ռուսիա և Ճաբոն յայտարարեցին որ պատրաստ են ուղղակի հաշտութեան բանակցութենց մէջ մտնել։ Բուզվէլթ փափաքեցաւ որ հաշտութիւնը արիւնի նոր հոսանքի մը մէջ չմկրտուի։ Աչխարհ հրճուեցաւ որ Բուզվէլթ հաշտութեան դռնակ մը կը բանայ, բայց ահա վերջին լուրերը բոլորովին անոնպատ են։

Զարին և Վիլհէլմ կայսեր միջեւ կարծիքներու կարեւոր փոխանակութիւն մը տեղի ունեցաւ հաշտութեան խնդրոյն վրայ։ Վիլհէլմ կայսր շատ կ'աշխատի համոզելու համար Զարը թէ Ռուսիոյ նոր տարութեան առաջը առնելու միակ միջոցն է հաշտութիւնը։ Վատիվոսթոքի հետ իրենց հաղորդակցութիւնը պահել, և այս կերպով այդ քաղաքը ցամաքէն պիտի առնուի։ Գալով Սախալին կղզիին, քանի մը ճաբոնական վաշտեր կրնան բաւել զբաւելու համար զայն, քանի որ ռուսական նաւատորմիղը փճացած է։ Երբ յաջողի պատերազմական այս ծրագիրը, Ճաբոնցիք արդարեւ ռուսական հողի վրայ կոխած կ'ըլլան, ինչ որ չէ եղած մինչեւ հիմա։ Առա՛ ճիշդ յարմար առնը հաշտութեան պայմանները առատորէն ներկայացնելու Ռուսիոյ։ Ինչ հարկ հիմա փութալ, թո՛ղ քանիցս խնդրէ Ռուսիա։

ՀԱՇՏՈՒԹԵԱՆ ԲԵՐ ՈՒ ԴԷՄ

ՌՈՒՍ ԵԼՄՏԿ. ՆԱԽԱՐԱՐԻՆ ՏԵՂԵԿԱԳԻՐԸ

Ելմտական նախարար Քօքովցէվ երկար տեղեկագիր մը մատուցանելով Զարին, կը յայտարարէ թէ դրամական մասին ունէ պատասխանատուութիւն չի կրնար յանձն առնել եթէ պատերազմը շարունակուի։ Զօրավար Լինէվիչի բանակին կեդրոնէն արժանահաւատ անձեր կը հեռագրեն թէ ռուս բանակին կացութիւնը բնաւ յոյս չի ներշնչեր ամենափոքր յաղթութեան մը։ Լինէվիչ պարտաւորուեր է մինչեւ ցայդ 150 սպայ հրացանի բռնել տալ, զինուորները այս հաշուին մէջ չեն։

Իսկ պատերազմին շարունակութեան կուսակիցները կը յայտարարեն թէ նախ՝ Ռուսիոյ համար անկարելի է պատերազմական տուգանք վճարել, և երկրորդ՝ խոհեմութիւն չէ Մանչուրիոյ պարտեալ և կողմալուծեալ բանակը Ռուսիա փոխադրել առանց յաղթութեան մը խանդավառութեան։ Արդէն Սիպերիոյ մէջ բազմաթիւ աւազակախումբեր կազմուած են։

⁂ Պերլինի սեղանաւորական շրջանակներուն մէջ կը ծանուցուի թէ Ռուսիա պատերազմը շարունակելու համար չի կրնար այլեւս արտասահմանէն դրամ գտնել, մինչդեռ հաշտութենէն վերջ սեղանաւորական աշխարհը պիտի փութայ նոր վարկ բանալ իրեն։

⁂ Թոքիոյէն Թայմզի թղթակիցը կը հեռագրէ թէ հաշտութիւնը դիւրաւ կնքուելիք բան չէ, սա՛ գլխաւոր պատճառաւ որ Ճաբոն ա՛նպիսի երաշխաւորութիւններ պիտի պահանջէ, որոնք այսուհետեւ անկարելի ընեն ո և է պատերազմ Ծ. Արեւելքի մէջ։ Ռուսիա կրնայ տալ այդ երաշխաւորութիւնները, ինքը որ 200 տարիէ ի վեր Ծ. Արեւելեան քաղաքականութիւն մը ունի։ Խնդիրը տակաւին շատ ջուր կը վերցնէ։

⁂ Թէեւ Բուզվէլթ շատ կ'աշխատի մեղմացնել Ճաբոնի պայմանները, բայց բոլոր Ճաբոնցի զօրավարները, ծովակալները և ժողովուրդին ամենաստուար մասը կը պահանջէ որ պայմանները ծանր ըլլան։ Ցուշիմայի ծովամարտէն վերջ Ճաբոն կրնայ շարունակել պատերազմը առանց մեծ դժուարութեան, քանի որ այլ եւս իր ծովային հաղորդակցութիւնները վտանգի ենթակայ չեն։ Օեամա 600,000 հոգինոց բանակ մը ունի, 200,000 հոգի ալ Ճաբոնի մէջ կը սպասէ, և Լինէվիչի ջախջախիչ պարտութեան նախընթաց օրը անտեղի է հաշտութեան վրայ խօսիլ։ Այս կէտը շատ լաւ ճշտած է Օեամա Միքասայէն ղրկած իր յիշատակագրին մէջ, որով կը ծանուցանէ Ցուշիմի երկրորդ կիսուն սպասել մեծ ճակատամարտին։ Օեամա Թոկոյի պարծանքին կ'ուզէ հաւասարիլ, ջնջելով Մանչուրիոյ ռուսական բանակը, ինչպէս ախիւռեռակայ ծովակալը ջնջեց ռուսական նաւատորմիղը։

⁂ Երկու ռուս Ակադեմականներ անցեալ օր Զարին ներկայանալով փափաք յայտնեցին որ պատերազմը վերջ գտնէ։ Ն. Վեհափառութիւն կարճ կապել տուաւ անոնց, յայտարարելով թէ այդ մասին հարկ եղածը պիտի կարգադրուի։

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՑՈՒԹԻՒՆԸ

ԳԵՐՄԱՆԻՈՅ ՅԱՋՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՄԱՐՕՔԻ ՄԷՋ

Ֆասէ հետեւեալը կը հեռագրեն Սպանսարտի. — Մարօքեան իշխանութիւնք թէեւ յուսախաբ եղած են քիչ մը Մեծին Բրիտանիոյ բռնած ընթացքէն, որով չուզեր Միջազգային ժողովին մասնակցիլ, բայց համոզուած են թէ Գերմանիա մինչեւ վերջը պիտի պաշտպանէ զիրենք, և Տէրութենց մեծամասնութիւնը տրամադիր պիտի գտնուի ժողովին գաղափարին, եթէ նոյն իսկ չուզեն մասնակցիլ Մեծն Բրիտանիա, Ֆրանսա, Սպանիա և Իտալիա։ Գերմանիա ա՛նքան բացորոշ հաստատիքեր տուած է Մարօքի որ այս վերջինը համոզուած է այլ եւս թէ մինչեւ վերջը պիտի կրնայ մերժել Ֆրանսայի առաջարկութիւնները։ Թաթէնպասի բանեցուցած լեզուն մեծ տպաւորութիւն ըրած է Մարօքի վրայ։ Գերմանիա իր այս լեզուին օգտուելը քաղած է արդէն մանր մունր մարօքեան մենաշնորհներով, որոնք տակաւին գաղտնի կը պահուին, և կը յուսացուի որ ի մօտոյ ա՛լ աւելի կարեւոր մենաշնորհներ պիտի տրուին Գերմանիոյ։ Կացութիւնը երթալով կը ծանրանայ։ Ամէն ոք անձկալից կը սպասէ Անգլիոյ քաղաքականութեան այս մասին։

⁂ Միացեալ Նահանգները և Մեծն Բրիտանիա այս միջոցիս դիւանագիտական բանակցութեան մէջ են, Մարօքեան Ժողովին միջազգային հրաւէրը մերժելու համար։ Կ'ըսուի թէ ամերիկեան կառավարութիւնը անգլիական տեսակէտին հանակերպելով մտադիր է մերժել մասնակցութիւնը։

⁂ Բարիզի թերթերը կը յայտարարեն թէ ապատքին գործոց նախարարի պաշտօնին մէկ արժանաւոր ընտրելին է ներկայ պարագաներուն մէջ Մ. Ֆուէսքիէ, որ 1880ին Մաարոքի Մարօքեան ժողովին առնն ալ նոյն պաշտօնը կը վարէր։

⁂ Վարչապետ Մ. Ռուվիէ կ'աշխատի համոզել Մ. Լէօն Պուրժուան առժամապէս ընդունիլ Պերլինի ֆրանսական դեսպանութիւնը, մինչեւ որ Մարօքի խնդիրը կարգադրուի։ Պուրժուա տրամադիր կ'երեւի։

ՄԵՆԵԼԻՔԻ ՆՈՒԷՐՆԵՐԸ ՎԻԼՀԷԼՄ ԿԱՅՍԵՐ.

— Հապշիսատի Վեհապետը Գերման դեսպան Թոզէնի միջոցաւ Վիլհէլմ կայսեր զրկեց հեռեւեալ նուէրները. — Նախ Աստղ Եթովպիոյ ամենաբարձր պատուանշանը ոսկեհուռ և ադամանդազարդ, բոլորակ և ոսկեզրուագ վահան մը, երկու նիզակ մարդաչափ բարձրութեամբ, կարմիր մետաքսէ հանդերձական գլխաշ մը, երկու հնօրեայ եթովպական խաչ, որոնք թափորներուն առջեւէն կը տարուին։ Այս խաչերէն մին եթովպական և միւսը յունական արձանագրութիւն կը կրէ։ Ակէց կը հետեւցուի թէ այդ խաչերը վեցերորդ դարէն ալ առաջուան են, որովհետեւ այդ դարէն վերջ յունարէն լեզուն այլ եւս չէր գործածուեր եթովպական եկեղեցիին մէջ։ Մենելիք ասոնցմէ զատ գերման կայսր նուիրած է թուր մը ոսկեզրուագ պատեանով, նաեւ փիղի չորս ակռայ արտասովոր մեծութեամբ։

ԱՄԵՐԻԿԵԱՆ ՄԱՐՏԱՆԱՒԵՐՈՒՆ ՄՈՒՏՔԸ ՃԱԲՈՆՑԻՆԵՐՈՒՆ ԱՐԳԻԼՈՒԱԾ.— Միացեալ Նահանգաց ծովային նախարարութիւնը հրամայեց որ նաւային ռազմափորձերուն ժամանակ ուէշ օտարականի չարտօնուի ամերիկեան մարտանաւերուն մէջ երթալ։ Այս հրամանը մանաւորապէս ուղղուած է ճաբոնական Լրտեսութեան դէմ, որովհետեւ ստուգուեր է որ Ճաբոնցի ծովային սպաներ իբրեւ խոհարար կամ իբրեւ սպասաւոր ամերիկեան մարտանաւերը կը մտնեն, անոնց կազմակերպութիւնը և սպառազինութիւնը մօտէն ուսումնասիրելու համար։ Ճաբոնական լրտեսութեան այս գաղտնիքը առաջին անգամ երեւան հանեց ամերիկացի ծովակալ Իվընս, որ անգամ մը Ճաբոնական մարտանաւ մը այցելած միջոցին տեսաւ որ անոր նաւապետը իր նախկին սպասաւորն էր։ Ամերիկեան մարտանաւերուն մէջ գտնուած բոլոր Ճաբոնցի ծառաները հեռացուիլ կը ճամբուին։

ԲԱՐԻԶԻ ԳՈՂԵՐԸ.—Բարիզէն կը գրեն Նայէ Ֆրայէ Բրեսէի թէ ժամանակէ մը ի վեր Ֆրանսայի մայրաքաղաքին մէջ խիստ չատցած են գողութեան, աւազակութեան և սպանութեան դէպքերը, մանաւանդ արուարձաններուն մէջ։ Ասոնց բնակիչները ադերսագրով մը Վարչապետ Մ. Ռուվիէի դիմելով խնդրեցին որ ոստիկանական հսկողութիւնը կրկնապատկուի։

ՎԻԼՀԷԼՄ ԿԱՅՍՐ ԵՒ ՖՐԱՆՍԱԿԱՆ ԲԱՆԱԿԸ.—Վիլհէլմ կայսր իր ինքնագիր մակագրութեամբ կենդանագիրը նուիրեց Ֆրանսայի զօրավար Լաքրուայի, որ գերման գանձատանը մուտքեան առաթիւ գացող պատուիրակութեան պետն էր։

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՍԱԿԱՐԱՆՆԵՐԸ.— Վիեննայէ, Լոնտոնէ և Բարիզէ առնուած սակարանական լուրերը կը ծանուցանեն թէ իրաւ է որ Դշ, գիներու ընդհանուր բարձրացում մը տեղի ունեցաւ արժեթուղթերուն վրայ հաշտութեան լուրին իբրեւ հետեւանք, բայց երկար չտեւեց բարձրացումը, որովհետեւ առաջին ոգեւորութենէն վերջ սկսաւ մտահոգութիւնը թէ իրօք կարծուածին չափ մ՚ա՛ է հաշտութիւնը։ Մարօքի խնդրոյն ստացած նոր երեւոյթներուն վրայ Սակարանները հետզհետէ ազդուեցան, և հակամէտ են աւելի ազդուելու, մանաւանդ Լոնտոնի Սակարանը տկար գնաց Մարօքի գործերուն համար։

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՆՕԹԵՐ.— Ռումանիոյ թագաւորը, թագուհին, գահաժառանգ իշխանն ու իշխանուհին անցեալ շաբթու Բէօսթէնէ այցելցին, և պաշտօնապէս բացումը կատարուեցաւ դէպի Պիրէն և Իլմիր թղթատարական և ուղեւորական նաւարկութեան, ինչպէս նաեւ Կ. Պոլսոյ և Բէօսթէնէի միջեւ ընդհանուր հեռագրութեան։ Պարոնները կը զետեղէ գերմանական Ցոն Բօսպիէլսքի» պալանկիր նաւը ի դիմաց գերմանական Ընկերութեան, որ Ռումանիայէն 35 տարուան մենաշնորհ ստացած է, ինչպէս նաեւ տարեկան 2000 սթերլինի վարկ մը։ Անթէ հեռագրութիւն հաստատուեցաւ նաեւ ռումէն թղթատարական նաւերուն մէջ, և այս առթիւ կատարուած հայկերոյթի առն թագաւորը ռումանական նաւերուն թիւը աւելցնելու պէտքին վրայ խօսեցաւ։ Հինգերորդ շրջենաւ մըն ալ պիտի շինուի, Հընդկաստանի և Ծ. Արեւելքի հետ հաղորդակցելու գաղափարը առաջ տանելու նպատակաւ։ Ռումանական կառավարութիւնը երկու բեռնարարձ շոգենաւ ալ պիտի յանձնարարէ մին Դանուբի և միւս Արշիպեղագոսի համար։

ՏՕԲԹՕՐ ՃԷԼԱԼԵԱՆ
Հանրածանօթ մասնագէտ
Վենեռական ու ծնունդամիզային տեսչուու
Վերադարձած Եւրոպական ճարտարութենէն կը շարունակէ յանախորդները ընդունիլ Բէրա, մեծ փողոցի ուղղութեան վրայ, Միութ փողոցի անկիւնը, Թիւ 4։
20 – 50

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԱՏԵՐԱԶՄ

ԼՈՆՏՈՆ, 15 Յունիս.—Ճաբոնական կառավարութիւնը կը ծանուցանէ թէ ապարապետ Լինէվիչի և Վլատիվոսթոքի մէջեւ հաղորդակցութիւնները մօտերս կը խղդուին Ճաբոնական բանակին կողմէ։ Մարէչալ Օեամա մեծ ուժերով յարձակեցաւ Բիրինի հարաւակողմէն, և կատարելապէս պաշարեց Զօր. Լինէվիչի բանակը։ Ճաբոնցիք կտրած են Ռուս Սպարապետին նահանջի գիծը, որով Ռուս բանակը տագնապալից կացութեան մը մէջ կը գտնուի, և չկրնալով ետ նահանջել պիտի ստիպուի յուսահատական գերադոյն պայքար մը մղել։ Ցայս չկայ որ ռուս բանակը կարենայ ազատիլ։ Իբր պատասխան Զօր. Լինէվիչի կողմէ հաշտութեան վրայ ըսուած խօսքերուն, Մարէչալ Օեամա յայտարարեց թէ Ռուսք եթէ կ'ուզեն հաշտութիւն գնել, պէտք է ժամ առաջ դուրս ելնեն Մանչուրիայէ, և մինչեւ որ Ռուսք չպարպեն Մանչուրիան, անկարելի պիտի ըլլայ հաշտութիւն գնել։ Մարէչալ Օեամայի այս յայտարարութենց մեծ կարեւորութիւն կը տրուի։ Ռուս բանակին դէմ Ճաբոնցիներուն ի գործ դրած յարձակողական շարժումը շատ առաջ գացած է։ Ճաբոնցիք կ'ուզեն մեծ հարուած մը տալ Սպարապետ Լինէվիչի։ «Սէնդրլ Նիւզ»ի թղթակիցը կը հեռագրէ Զօր. Օքուի բանակատեղին թէ շարունակ անձրեւ կը տեղայ, ճամբաները աւրուած են, բայց օդերու այս վիճակը արգելք չըլլար ճաբոնական բանակին կատարած գործողութենց։ Մօտերս կարեւոր գործողութիւններու կ'ըսպասուի։ Կոկերուն վրայ սկսած գործողութիւնը մօտերս պիտի տարածուի ճակտին վրայ։

ԲԵԹԵՐՍԳՈՒՐԳ.— Կունչուլինէ կը հեռագրուի Յունիս 14 թուով.— Մեր ձախ կողին վրայ եղած գործողութիւնները վճռական հանդամանք չունին։ Թշնամին մեծ ուժեր հաւաքած է այն կողմը, և մեր յառաջապահ ջոկանները դէպի հիւսիս նահանջեցին, բայց Ճաբոնցիք չեն շարունակեր իրենց յառաջխաղաց շարժումը։ Բաւական զօրաւոր թնդանօթաձգութիւն մը սկսած է մեր աջ կողին վրայ։ Վերջին երեք օրերուն մէջ, գիշեր ժամանակ, Քունկուլունները Կունչուլինի և Ցուշիադունի միջեւ յարձակեցան ռուս հետազօտիչ գունդերու վրայ։ Մեր յառաջապահները վանեցին Քունկուլունները այս յարձակումները, բաւական կորուստի ենթարկելով։ Մեր կորուստները անմշան են։

—Նաւային Սպայակոյտը զեկոյց մը հրատարակեց թէ լուր հասաւ որ «Իմբերադոր Ալեքսանդր Դ.» զրահաւորին բոլոր սպաները և նաւազները կորան, և ոչ ոք ողջ մնաց։ «Ֆոլոտիլօ» և «Նավարին» զրահաւորներուն բոլոր նաւազները կորան, և ողջ մնացին միայն մէկ մէկ նաւազ, որոնք հիմա Նակազաքի կը գտնուին։

ԹՕՔԻՕ.— Ծովակալ Թոկօ մանրամասն տեղեկագիր մը ուղղելով Զուշիմայի նաւամարտին վրայ, կ'ըսէ թէ Ռուսք կրակ բացին Մայիս 27ին կէս օրէ վերջ ժամը 2.8ին։ Ճաբոնցիք, այն ատեն իրենց կրակը կեդրոնացուցին թշնամի նաւախումբերուն առաջնորդող երկու մարտանաւերու վրայ, և ասիկա այնքան մեծ յաջողութիւն ունեցաւ որ նաւամարտին վախճանը որոշուեցաւ ի նպաստ Ճաբոնցիներուն, կէս օրէ վերջ ժամը 2.45ին, այսինքն նաւամարտը սկսելէն 37 վայրկեան ետքը։ Դալով Մայիս 28ի դէպքերուն, Ծովակալ Թոկօ իր նոյն տեղեկագրին մէջ կ'ըսէ թէ Ճաբոնական մարտանաւերը այնքան մօտէն պաշարեցին Ծովակալ Նէպոկաթովի նաւաբաժինը որ այլ եւս անօգուտ եղաւ ո և է դիմադրութիւն։

ԼՈՆՏՈՆ.—Թոքիոյէն կը հեռագրուի «Տէյլի Թէլէկրաֆ»ի թէ պատերազմին սկիզբէն ի վեր Ճաբոնական նաւատորմը ամէնքը կորսնցուցած է 221 սպայ և 1782 նաւազ սպանեալ և 170 սպայ ու 1497 նաւազ վիրաւոր։

ԲԱՐԻԶ.—Ժուռնալ կը հրատարակէ պատմէնը Մանչուրիոյ ռուս զօրավարներուն կողմէ Զարին զրկուած հեռագրին, որ Յունիս 10 թուականը կը կրէ և որով ռուս զօրավարները կը յայտարարեն թէ կացութիւնը այնքան նպաստաւոր է որ հարկ չկայ հաշտութիւն կնքելու։ Հրամատարները կ'ըսեն թէ պատրաստ են անմիջապէս յարձակողական սկսելու։ Այս հեռագրին ճշդութիւնը խիստ կասկածելի է, որովհետեւ հաւանական չէ որ բարիզեան թերթ մը Յունիս 12ին ձեռք ձգէ հեռագիրի մը ամբողջութիւնը, որ Մանչուրիայէն քաշուած էր ամսոյս 10ին։

(Պատօնական). — Ռուսիոյ և Ճաբոնի պատուիրակներուն գումարումը, հաշտութեան կնքման մասին, Ուաշինկթընի մէջ տեղի պիտի ունենայ։

ԼՈՆՏՈՆ.—Թոքիոյէն կը հեռագրեն «Տէյլի Թէլէկրաֆ»ի. — «Ճաբոնական թերթերը կ'ըսեն թէ հաշտութեան մասին Ռուսիոյ վերջնական պատասխանն օր օրի յետաձգումը, կ'ուելցնէ Ճաբոնի անվստահութիւնը։ Ճաբոն կը սկսի մտածել թէ Ռուսիա բնաւ որոշ բաղձանք մը չունի հաշտութեան մասին։ Ճաբոնի հանրային կարծիքը դրգռուած է, և ատոր գլխաւոր պատճառը այն է թէ վախ կայ թէ մի՛ գուցէ Ռուսիա կարծիքները մոլորեցնէ Եւրոպայի մէջ և հաստատել տայ թէ Ճաբոն, ամէնէն առաջ ուժասպառ ու դրամէ զրկուած, պատերազմի դադարումը կը խնդրէ և թէ փոխհանդուրժեւեմբ ընդունած է Ռուսիոյ պայմանները։ Ուրեմն բանակցութիւնը։ Մր. Բուզվէլթ ալ սկսած է դժուարին կացութիւն մը ունենալ։ Ճաբոնական թերթերը գրեթէ միահաղոյն կը յայտարարեն թէ ժամանակ է որոշում տալ թէ պատերազմը պիտի շարունակի՞ թէ հաշտութիւն պիտի կնքուի։

ՈՒԱՇԻՆԿԹԸՆ.—Ռիթիէր կ'ըսէ. «Պաշտօնապէս կը ծանուցուի թէ Ռուսիոյ և Ճաբոնի պատուիրակները Ուաշինկթընի մէջ պիտի գումարուին։

ԹՈՔԻՕ.—Մ. Նահանգաց Նախագահին միջնորդութեամբ Մելքասան ոգրոշեց պայմաններու մասին բարեփոխութիւններ ընել, որոնցմէ անմիջապէս ետքը, հաշտութեան բանակցութենց պիտի ձեռնարկուի։

ՈՒԱՇԻՆԿԹԸՆ.—Կ'ըսուի թէ Ճաբոնի կողմէ պատուիրակ կարգուած են Իթօ մարքիզը ու Պառոն Քամմուրա և Ռուսիոյ կողմէ ալ Պառոն Ռոզէն ու Մ. Նելիդով։ Այս տեղի չրջանակներուն մէջ կ'ըսուի թէ թէեւ Ռուսիա Ճաբոնի առաջարկեր է կարճատեւ զինադադար մը հնքել, բայց Ճաբոն բացարձակապէս մերժեր է։

ԲԵՐԼԻՆ՝ՍՊԱՌԻՐԿ.—Ռուս գործակալութիւնը կը ծանուցանէ թէ Ալեքսիս մեծ դուքսը հրաժարեր է ռուս նաւատորմին ընդհանուր ծովակալի պաշտօնէն։

ԱԹԷՆՔ.—Արքայական հրամանագրի մը համաձայն Պետութեան խնամակալ պիտի կատարուի հանգուցեալ Մ. Տէլիանիի յուղարկաւորութիւնը զինուորական մեծ պատիւներով։ Թագաւորը չուզեց որ Երեսի. Ժողովը լուծուի։ Կը պահանջէ որ հանգուցեալ վարչապետին առաջարկած անտեսական մրջնցները քննէարկուին։

ՖԼԷՆՍԲՈՒՐԳ (Շլէզվիկ).— Ֆլենսպուրգի շրջանային ընկերութեան «Թէլեգրաֆ» չրգենաւը որ Ճաբոնէն Թիէն-Ցին կ'երթար, չինական հիւսիսային ծովին մէջ ընկղմուեր է ռուսական «Տոն» օժանդակ յածանաւին կողմէ։ Նաւազները ազատուեր են։ Նոգենաւը պատերազմի արգիլեալ նիւթ բեռցած չէր։

ԲԱՐԻԶ.—Մ. Ռուվիէ որոշեց ելմտական և արտաքին գործոց նախարարութիւնները միւնոյն ժամանակ վարել, մինչեւ այն օրը երբ պարագաներուն համաձայն պիտի որոշէ թէ այդ երկու պաշտօններէն օրը պէտք է պահէ։

Վ. ԷՆՆԻ.—Մանաւանդի մէջ հազիւ թէ կարգադրուելու վրայ էր, նախարարական ուղղանգը, ահա ուրիշ մը երեւան կուգայ Աւստրիոյ մէջ։ Ձեհերը լեզուի խնդիր յարուցած են և կը յայտարարեն թէ այն ատեն միայն պիտի քննէարկեն աւտրեւգերման առեւտրական դաշնագիրը, երբ Ձեհերու հանրապարանին հաստատութիւնը ստանան։ Վարչապետ Պ. Կոսէ տեսակցեցաւ Կայսեր հետ, բայց արդիւնքը յայտնի չէ։

ԼՈՆՏՈՆ.—Շուէտի Օսքար թագաւորին որդւոյն՝ Կիւթիով իշխանին ամուսնութիւնը Քոնոթի մը քանի մը աղջկան՝ Մարկարիթա իշխանուհիին հետ, երէկ տեղի ունեցաւ Ուինտսորի մատուռին մէջ։

ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԷՆ

ՈՒՍՈՒՄՆ. ԽՈՐՀՈՒՐԴԸ երէկ գումարուեցաւ Ղալաթիոյ Խորհրդարանին մէջ և զբաղեցաւ հետեւեալ խնդիրներով.

1.— Խորհուրդը ատեանը բացուած միջոցին յանձնայս իր ցաւը յայտնեց Վսեմ. Պր. Կարապետ Եղեանցի մահուան համար, իբրեւ ազգ. կրթութեան և դպրութենց սատարող բազմարդիւն աշխատաւորի և որոշեց գրով հաղորդել իր վշտակցութիւնը առ Պ. Գրիգոր Պոկսանով՝ հանգուցեալին ազգականին ի Բեթերսպուրգ։

2.— Ատենապետ Տօքթ. Աճէմեան պէս ներկայեց Կրթ. Ծրագրին յարակից Մանկապարտէզի կամ Ծաղկոցի բաժնին կազմակերպութեան, վարժութեանց և դաստիարակութենց յատուկ յայտագիր մը ուրոյն հրահանգներով և կանոնագրով մը։ Խորհուրդը կարդալով նախ յայտագիրը հատուած առ հատուած, ինչ ինչ փոփոխութեամբ աւարտեց անոր մեծագոյն ուսումնասիրութիւնը և չարունակութիւնը թողուց յաջորդ նստին։

3.— Ֆիլիպէի ազգ. վարժարանի Հոգաբարձութիւնը գրով մը կը յայտնէր թէ տեղւոյն ազգ. վարժարանի չրջանաւարտ աշակերտուհիներէն մին երկու տարիէ ի վեր դոհացուցիչ կերպով կը պաշտօնավարէր մանկապարտէզին և նախակրթարանին մէջ և վերջերս ընդունուեր է Ներսիսեան դպրոցի մէջ։ Ասոնց հետեւանքը մը տալ խնդրոյն և որոշեց հաղորդել հարցաքննութեան եղանակը անոր համաձայն քննութեան ենթարկելու համար նոյն ընտրելին։

4.—Բերայի Լսպեան, Գատրգիւղի Արամեան և Մաքրիգիւղի Տատեան վարժարաններու տեսուչներուն կողմէ Խորնրդոյ ուղղուած բողոքագրերու վրայ, Խորհուրդը հարկ դատեց հրապարակաւ յայտարարել թէ այդ վարժարաններուն մէջ ևս Օսմ. լեզուի և Օրէնսգիտական տեղեկութեանց դասաւանդութիւնը տեղի կ'ունենայ խրատական նպատակով և կրթ. Մրազրի տրամադրած նամով և կրթ. Մրազրի տրամադրած չափով, հակառակ այս մասին Մաճառիսի Եֆեֆեաբ լրագրոյ Մայիս 26ի զուտէի եֆեֆեաբ լրագրոյ Մայիս 26ի թուով հրատարակուած յօդուածի մը թուով հրատարակուած յօդուածի մը անհիմն տեղեկութեանց։

ՍԱՆԱՍԱՐԵԱՆ վարժարանի խնամակալութիւնը այսօր հրաւիրուած է նիստ գումարել Դալաթիոյ Խորհրդարանը։ Նիստին բացումէն վերջ ըստ սովորութեան Ս. Նախագահը Եղեանցի մահը գուժելով, ի նշան սուգի ատենը պիտի փակէ։

ԻԶՄԻՐի առաջնորդ Գեր. Տ. Եղիշէ եպիսկ. Դուրեան երէկ ժամը 10ին մայրաքաղաքս ժամանեց։ Բարի գալուստի գացած էին, եղբայրը Սգրիպաս էֆ. Դուրեան, Մկրտիչ էֆ Պէզազեան, Բրօֆ. Աբրահամ էֆ. Տէր Յակոբեան, Միսաք էֆ. Սուրեան են.։ Ն. Սրբազնութիւնը Ագրիպաս էֆ.ի Գատրգիւղի բնակարանը մեկնեցաւ։

ՆԱՒԼԷ ԳՈԼԻՒԻ թաղեցիները հանրագրութեամբ մը Պատրիարքարան դիմելով փափաք յայտնած են որ օրինաւոր Թաղ. Խորհուրդ մը ընտրուելու համար հրաւէրագիր տրուի Պատրիարքարանէ։

ՀԻՒԱՆԴԱՆՈՑԻ հանդերձապահ Թադէոս (Թադէ) էֆ. Գորֆուլի օսմ. հիւպատոս կարգուած ըլլալով, այսօր կը մեկնի իր նոր պաշտօնատեղին։

ԿԻՍԱՐԻՈՅ Պալակէս գիւղի ազգայիները հանրագրութեամբ մը դիմեալ խնդրած են Պատրիարքարանէ որ Դանիէլ Պաֆագեանը կամ Աստուածատուր Փափագեանը քահանայ ձեռնադրուի իրենց գիւղի եկեղեցիին վրայ և կամ Կիլիկիոյ Թեմերէն Կէմէրէկ գիւղի չորս քահանաներէն մին Տ. Գարեգինը իրենց եկեղեցիին մէջ քահանայագործելու հրաման տրուի։

ԽԱՐԲԵՐԴԻՆ կը գրեն մեզի. — Հիւսէյնիկ, ուր 600 տուն Հայ կայ, ունի չքեղօրէն կառուցուած ընդարձակ եկեղեցի մը, և իրեն ճիշդ քովը տղայոց վարժարանը, բաւական բարեձեւ և բարձրագիր դասարաններով, ուր կը դասաւանդուին մօտ 300 տղաքներ, չորս ուսուցիչներու հսկողութեան տակ։ Քիչ մը հեռու կը գտնուի աղջկանց վարժարանը որ ունի 3 ուսուցչուհի և 150է աւելի ուսանողուհիներ։ Այս երկու դպրոցներն ալ կը վարուին մինոյն Հոգաբարձութենէն։ Ասոնց տարեկան բոլոր ծախքերը կը գոյանան ժողովրդային նուէրներով, և որ բացարձակօրէն արդիւնքը կրնայ նկատուիլ նոյն Հոգաբարձութեան գործունէութեան։ Երկու դպրոցներն ալ բաւական փայլուն վիճակ մը ունին։ Իսկ Գրատէր Խմամակալութիւն ըսուած մարմին մըն ալ կայ որ կ'աջակցի Հոգաբարձութեան, ամէն տարի 45—50ի մօտ որբ տղայոց և 20ի չափ ալ աղքատիկ աղջիկներու թոշակագները վճարելով և անոնց գրենական պիտոյքները հոգալով։ Երկու դպրոցներու պիտանէն այժմ 120 օսմ.ոսկիի կը յանգի։ Հիւսէյնիկցին մեծ ու գեղեցիկ պակաս մը ունի սակայն և այն ալ օտար յարմանութեանց չլացուցիչ հոսանքներու բուռն մղումին առջեւ տեղի տալն է։ Քարոզչի մը չգոյութիւնն է պատճառ ժողովուրդին իր եկեղեցիին ուծանալուն որուն համար վեղարաւորի մը անհրաժեշտութիւնը՝ նիւթական հացին չափ զգալի ճան յուած է (*)։ Զկայ տեղ մը, եթէ չեմ սխալիր, որքան հոս, ուր տոմային եկեղեցիին տէրը՝ այնքան վառ ու սրանուէր երկիւղածութեամբ պահուի բարեպաշտիկ սրտերու մէջ։ Եկեղեցիին պայծառութիւնը անաղարտ պահելու համար, էն աղքատիկը իր քսակին բերանը բանալու չի ստիպեր։ Եթէ այս եկեղեցիին վանք չեմ ըսեր, պատճառը որոշ է արդէն, սակայն անոր ճամբան, վանքերէ շատ աւելի բանուկ է քրիստոնեայ և ոչ-քրիստոնեայ բարեպաշտ ուխտաւորներու համար ամէն կիրակուան, կեդրոնէն ու բոլոր շրջակայ գիւղերէն երբեք պակաս չեն ուխտաւորներ։ Խարբերդցիին նախապատիւ տարբը, Սբրուհի Վաւաղեայ կոյսն է։ Տեղւոյս ժողովուրդին նիւթականը մէջկայ է։ Մէկ մասը վաճառական է, մաս մը արհեստաւոր, իսկ շատ աննշան մաս մըն ալ երկրագործութեամբ կ'զբաղի։

ԵՒԴՈԿԻՈՅ մեր նոր գործակալն է Յովհաննէս էֆ. Դաղլեան, որուն կրնան դիմել Մաճղումի բաժանորդ գրելի փափաքողները։

ԱԶԴ.— Վաղը կիրակի 5 յունիս Թաղիս Ս. Նիկողայոս եկեղեցւոյն մէջ Ս. Պատարագ պիտի մատուցանէ Տ. Գրիգորիս արքեպ. Յովհաննէսեան ի հանդիսատ հոգւոյ հանգուցեալ դպրաց և ի հոգւոր միխիթարութիւն բարեպաշտ ժողովրդեան և այս առթիւ դպրութեան ատենն պիտի տայ Ս. եկեղեցւոյս մէջ պաշտօնավարող չորս դպիրներու.

Ի դիմայ Թաղ. Խորհրդոյ
Ս. Նիկ. եկեղեցւոյ Թօփ-Դարուի
Վ. Ատենադպիր Ատենապետ
Օ. ՁԱՔԱՐԵԱՆ ՄԻՀՐԱՆ ԱՇՃԵԱՆ

Սկզբնաւորութիւն ժամերգութեանց ժամը 11։

(*) Խարբերդի Առաջնորդը ինչ կ'ընէ արդեօք, բնաւ չմ'յսելեր Հիւսէյնիկի ու չի՞ քարոզեր, երբ այսչափ քարոզի ծարաւի ունկնդիրներ կան եղեր։ Գոնէ Թաւանճեանի քարոզագիրքն ալ չհրատարակուեցաւ որ մաս մը բան Հիւսէյնիկ ղրկել առաջարկէինք։ Ծ. Խ.

ՀԱՅ-ԲՈՂՈՔԱԿԱՆՆԵՐԻՆ.— Կէտիկ փաշայի ամերիկեան երկաթ վարժարանին տարեկան հարցաքննութիւնները Բ. օր սկսան, և երեք օր տեւեցին։ Շրջանաւարտ կարգին վկայականներու բաշխման հանդէսը Եշ. օր տեղի ունեցաւ վարժարանին ընդարձակ պարտէզին մէջ։ Հանդէսին կը նախագահէր «Սուլթանաբեր»ի պատենաւէր տօքթ. Ճ։ Ռ. Կրէն։ Ներկայ էին մայրաքաղաքիս հոլանտական դեսպանատան մատուռին քարոզիչ-երէց Վեր. Ֆրու, Պատ. կ. Ց. Քէլորեան, քանի մը ամերիկացի տիկիններ, աշակերտներու ծնողքներ, ազգականներ, ևն.։ Ներկայ տարուան շրջանաւարտներն են չորս, որոնց 3ը՝ Հայ և 1ը յոյն,—Օրիորդք՝ Էֆրոնիա Ց. Գրիգորեան, Սաթենիկ Խաչատուրեան, Սրբուհի Երեցեան և Գալիօբի Բալաթիսիս։ Առաջին երկուքը իրենց աւարտական ճառերը արտասանեցին հայերէն, երրորդը՝ անգլերէն և վերջինը յունարէն լեզուով։ Վկայականները բաշխեց Տօքթ. Կրէն, որ խօսեցաւ նաեւ «Հուսկ բանք»ը։ Ցետոյ Վեր. Ֆրու երկու գեղեցիկ մրցանակներ տուաւ երկու ուսանողուհիներու, որոնք Ս. Գրոց դասի մէջ էն բարձր թիւերը չհասած էին։ Ա. Մրցանակը ընդունեց շրջանաւարտ կարգէն Օր. Էֆրոնիա Ց. Գրիգորեան, և Բ. Մրցանակը՝ երիցագոյն կարգէն Օր. Հերմինէ Աճառեան։ Վեր. Ֆրու այդ առթիւ դիտել տուաւ թէ կը խոստանայ առաջիկայ տարի ևս երկու մրցանակներ տալ այն երկու ուսանողներուն, որոնք բարձրագոյն թիւերը կը չհասին անգլիերէն լեզուի մէջ։ Դպրոցական այդ սիրուն հանդէսը վերջացաւ Փառաբանական երգով։ Գ. Ս. Գ.

ԱԶԳ. ՀԻՒԱՆԴԱՆՈՑ.— Հանգուցեալ Յակոբ էֆ. Պարսիզպանեանի յուղարկաւորութեան առթիւ փոխան ծաղկեպսակի մէջ օսմ. ոսկի նուիրած են Հիւանդանոցին Տէր և Տիկին Գրիգոր էֆ. Պարսիզպանեան։

—Հոգաբարձութիւնս շնորհակալութեամբ կը ծանուցանէ Տիկրան էֆ. Ուսմէեան իր ողբացեալ քրոջ Օր. Ագապի Ուսմէեանի մահուան առթիւ տասը օսմ. ոսկի նուիրած է Հիւանդանոցիս։

—Մեծ. Յովակիմ էֆ. Ֆէրմանեան Պրուսայի իր հանգուցեալ հօր Մարտիրոս էֆ. Ֆէրմանեանի յուղարկաւորութեան առթիւ փոխան ծաղկեպսակի մէջ օսմ. ոսկի նուիրած է Հիւանդանոցիս։

—Հոգաբարձութիւնս շնորհակալութեամբ կը ծանուցանէ թէ Մանչէսթրէն Տիկին Եւդիսէ Շնորհաւորեան նուիրած է ի յիշատակ իր վաղամեռիկ դստեր Սրմինէ-Սաթենիկի, 2 անգլ. ոսկի ի պէտս Հիւանդանոցիս մէջ դարմանուող մանկանց։

Բիւրականի այս չարթուան թիւը հրապարակ կու գայ հետեւեալ ճոխ ու շահեկան բովանդակութեամբ.—

Խնարհ անտառներուն արժէքը.— Յակոբոս Ճէճիզեան։ Հոգեւոր երգարանը սրբազան հատորին մէջ կամ Սաղմոսները.— Ս. Պ. Մանուկեան։ Գեղեցիկ սեռը օսմանեան գրականութեան մէջ.— Սուլթան Թաղադեան։ Ինքնատիպ եղիր (Անգլիական Բարքեր). Հրատ Նազարեան։ Ալքալամուլութեան շուրջը.— Յովսեփ Խորով։ Արեւելեան որբանոցը և Բողոքական հասարակութիւնը.— Վ. Ա. Բ.։ Ուսուցչական ասուլիսներ.— Կարապետ Գօճանան։ Ճարտուհիին նշանաբանը.—Թարգմ. Օր. Ա.։ Ռոպերթ Գոլէճի և Աղջկանց Ամերիկեան Գոլէճի Հանդէսները.— Χ.։ Մահ Կարապետ Եղեանցի։ Քաղաքական են.։

ՅՈՒՂԱՐԿԱՒՈՐՈՒԹԻՒՆ ՅԱԿՈԲ ԷՖ. ԳԱՐԱՄԱՆԵԱՆԻ

Յուղարկաւորներու ստուար բազմութեան մը ներկայութեամբ՝ տեղի ունեցաւ երէկ, ժամը 7½ին, Բերայի Ս. Երրորդութիւն եկեղեցիին մէջ ի Բարիզ հանգուցեալ Յակոբ էֆ. Գարամանեանի յուղարկաւորութեան հանդէսը վայելուչ շուքով։ Հանգուցեալին ընկերվենիկ դագաղը հանգչած չքեղ մահաբեմի վրայ, ծածկուած էր ծաղկեպսակներով զոյս զրկած էին Յարութիւն էֆ. Գարամանեան, Տիկին Թագուհի Գարամանեան, Տիկին Արփենաղ Գարամանեան, Շնորհ.էֆ. Թաչեան, Յովհաննէս էֆ. Բաքրճեան, Պօղոս Ղիւզի Թաղ. Խորհուրդը, Խաչիւզի Աղքատախնամը, Բերայի Աղքատախնամը, Բերայի Թաղ. Խորհուրդը, են.։

Մեռելական պարտականութեանց սան կարգը կատարուած ըլլալով արդէն, եկեղեցւոյն կարգը սկսաւ նախագահութեամբ Ս. Պարիարք Հօր, որուն շուրջը կը գտնուէին Տ. Տ. Բարթողիմէոս, Հմայեակ և Գէորգ Սրբազանները, Տ. Տ. Վահան Պարսիզակցի, Գրիգորիս Աբարգեան, Դաւեռնդ Դուրեան, Մարկոս Գարագաշեան և Տիրայր Մարգարեան վարդապետները ու քահանէ աւելի քահանաներ։ Իսկ դասին մէջ սգակիր կեցած էին Տ. Յովհաննէս աւագ քհնյ. Մկրտիչ և Գարամանեանց Տաներէց Տ. Վահան քհնյ. Խոյեան։

Հանգուցեալին եղբօրորդին Սրամ էֆ. Գարամանեան Բերայի Թաղ. Խորհրդոյ անդամներէն ըլլալով, Թաղ. Խորհուրդին կարգադրութեամբ Էսաեան վարժարանի աշակերտներէն պատգամաւորութիւն մը ներկայ գտնուեցաւ յուղարկաւորութեան՝ Տնօրէնին ընկերակցութեամբ։

Արարողութեանց աւարտումէն յետոյ, բեմ ելաւ Ս. Պատարագը և դամբանական մը խօսելով հակիրճ ակնարկութիւն մը ըրաւ կեանքի և Մահուան պարագաներուն վրայ, յայտնելով թէ գերեզմաններն ալ ճշմարտութիւններ կը յայտնեն, Աստուածային ճշմարտութիւններ, զորս ամէն առթիւ, ամէն պարագայի մէջ հարկ է խոստովանիլ։ Ն. Սրբազնութիւնը դագաղներու առջեւ խօսուածներուն ակնարկելով, «քա՛ւ լիցի որ, ըսաւ, ներբողեանները կարդալու պէտքէն է որ կը մղուինք խօսիլ, այլ միայն ի յայտ բերելու Աստուածային ճշմարտութիւնները որոնք կը բղխին այդ դագաղներէն։ Մարդկային կենաց գալուստէն է այդ ճշմարտութիւնն իր ամբողջ պարագաներով։ Մահը կուգայ երբեմն այն ատեն երբ տակաւին մեր գործերը չենք կատարած, մեր գերեզիկ մտածումները ի գործ չենք դրած։ Ճիշդ այս գաղափարն անչուշտ կ'անցնի այս օրուան յուղարկաւորները մտքէն, այս դագաղին առջեւ, ուր հանգչող մարդուն կեանքն ընդարձակ ասպարէզ մը ունէր դեռ իր առջեւ, իր բարի մտադրութիւններն ի գործ դնելու և կը մաղէր յեղակարծ։ Հետեւաբար, մեր պարտականութիւնն է մեր գործերը, մեր բարի մտադրութիւններն ի կենդանութեան, ժամանակին կատարել և պատրաստ գտնուիլ բոլորովին մահուան։ Դամբանախօս Սրբազանը անդրադարձաւ յետոյ հանգուցեալին անհատական կեանքին և պատկերացուց զայն՝ ինքնօգնութեամբ, իր գործունէութեան արդիւնքով առաջացած անձ մը որ պատուաւոր դիրք մը կը գրաւէր և կը թափառէր վերջերս առողջութեան ի խնդիր Եւրոպայի մէջ, ուր կնքեց իր մահկանացուն։ Գեղեցիկ գործեր չպակսեցան իրեն, օգնութիւններ ըրաւ իր կենդանութեան, և նպատեց Հիւանդանոցի շինութեան գործին։ Օրհնեալ է Աստուած որ հանգուցեալին եղբայրն ու այրին այսօր պատրաստ են իրենց սիրելւոյն բարի մտադրութիւնները կատարելու, և անյիշատակ չը ձգելու զայն իր մահուընէն ետքն ալ։ Ն. Սրբազնութիւնը վերջացուց իր դամբանականը մաղթելով որ հանգուցեալին բարի մտադրութիւններն հասնին իրենց նպատակին և երկնային մխիթարութիւն հայցեց հանգուցեալին պարագաներուն։

Դամբանականէն վերջ դագաղը որուն ծոպերը կը կրէին Տեարք Վսեմ. Սարգիս Թաչեան, Կարապետ Թահթապրուն, Գրիգոր Եվրէնեան, Տօքթ. Ազէքսանդր պէյ Արապեան, Բարսեղ Թէքէեան և Մ. Պոսսաքի Սալը օղլու, եկեղեցական հանդիսաւոր թափորով դուրս հանուեցաւ եկեղեցիէն ու առաջնորդուեցաւ եկեղեցւոյն բակը ուր հանգստեան աղօթք ու աւետարան կարդացուեցաւ։ Հոն՝ յուղարկաւորները որոնց մէջ կը նշմարուէին Տեարք՝ Վսեմ. Աբիկ Ունճեան, Գաբրիէլ Նուբարեանկեան, Ռօպէր Նազբեան, Բարսեղ Սթամպօլուեան, Յեսու Շամանճեան, Տէլլա Սուտա Ֆայիզ փաշա, Մանուկ Արզեան, Պարիկ Կիւպէնկեան, Յարութիւն Ալանեան, Սերվիչէն, Կարապետ Սէֆէրեան, Եղիա Շահազիզ, Բ. Մանուկեան, Սիմոն Բայսէրլեան, Արմենակ Մանուկեան, Մինրան Սմբատեան, Յակոբ Տիլսիզեան, Յարութիւն Ինճիճեան, Մկրտիչ Ասասեան, Օտքթ. Եաղուպեան, Յակոբ Յակոբօղ, Եդուարդ Գարակէօզեան, Մինրան Կեսարեան, Թումիկ Կեսարեան, Բարսեղ Հալաճեան, Միքայէլ Կիւլլապեան, Զգօն Խորասանճեան, Մինրդատ Նորատունկեան, Տիգրան Բարաղամեան, Մինրան Տէր Ներսէսեան, Մագսուտ Հարէնց, Գրիգոր Բըրըքճեան, Պողոս Քերէստէճեան, Սարգիս Թաչճեան, Տիգրան Քիրէճճեան, Ճիվան Արիանեան, Նշան Գալբսճեան, Արամ Սէլեան, Թէոդիկ, Ղազարոս Պէզազեան, Յակոբ Դաղազեան, Մարտիկ Եաղուպեան, Մ. Վէզիրի, Երուանդ Գարաեան, Կոնսիկ Համամճեան, Ֆէնէրճեան, Ներսէս Օհանեան, Աստուածատուր Հարենց, Ծննիկ Թէրճէմանեան, Վէնսան Ինճիճեան, Ալէքս Բօրեազի, Պիմէն Գասպարեան, Սահակ Գրլճեան, Յովսէփ Ամիրաեան, Անթաս Կիւզէլ, Ծննիկ Տէրունեան, Օտքթ. Թօփճեան և դեռ ուրիշ բազմաթիւ ծանօթ անձնաւորութիւններ վաճառականներ, յանձնակատարներ բժիշկներ, փաստաբաններ Հայ և օտարազգի, իրենց ցաւակցութիւնը յայտնեցին հանգուցեալին եղբօր Յարութիւն էֆ. Գարամանեանի, եղբորորդւոյն Արամ էֆ. Գարամանեանի և միւս պարագաներուն։

Յետոյ դագաղը չքեղ մեռելակառքի մը մէջ դրուելով առաջնորդուեցաւ Շիշլիի ազգ. գերեզմանատունը ուր ամփոփուեցաւ Յակոբ էֆ.ի մարմինը ընտանեկան դամբարանին մէջ։ Քանէ աւելի կառքեր հետեւեցան դագաղին մինչեւ գերեզմանատուն։

Մաճղումի ևս իր ցաւակցութիւնը կը յայտնէ այս տխուր առթիւ Վսեմ. Յարութիւն էֆ. Գարամանեանի, Արամ էֆ. Գարամանեանի և հանգուցեալին բոլոր պարագաներուն։

*** Յակոբ էֆ. Գարամանեանի յուղարկաւորութեան առթիւ փոխան ծաղկեպսակի հետեւեալ նուիրատուութիւններն եղած են Հիւանդանոցին Վսեմ. Յարութիւն էֆ. Ասլանեան 216, Պոսսաքի էֆ. Սալը Օղլու 216, Վսեմ. Տէր և Տիկին Սարգիս էֆ. Թաչճեան 216, Ազն. Տէր եւ Տիկին Կոնսիկ էֆ. Համամճեան 108, Վսեմ. Տէր և Տիկին Սերվիչէն էֆ. Տպարանապետ 216 ղ.։

Գարամանեան ընտանիքը իր խորին շնորհակալութիւնը կը յայտնէ ամէն անոնց որոնք ներկայ գտնուելով հանգուցեալ ՅԱԿՈԲ էֆ. ԳԱՐԱՄԱՆԵԱՆԻ յուղարկաւորութեան, իրենց ցաւակցութիւնը յայտնեցին։

Այրի Տիկին Հռիփսիմէ Պարտիզպանեան, Տէր և Տիկին Վարդան Պարտիզպանեան, Տէր և Տիկին Գրիգոր Պարտիզպանեան, Տէր և Տիկին Յովհաննէս Պարտիզպանեան և զաւակունք (ի Վան), Այրի Տիկին Կուսիկ Ալթունեան, Տէր և Տիկին Լեւոն Պարտիզպանեան, Տէր և Տիկին Նշան Պարտիզպանեան, Այրի Տիկին Գրիգա Ճգնաւորեան և զաւակունք, Յարութիւն Պարտիզպանեան, Մկրտիչ Պարտիզպանեան, Այրի Տիկին Թամէլա Շամամճեան, Տէր և Տիկին Գառնիկ Հայկեան, Տէր և Տիկին Տրդատ Գրիգորեան, և համայն ազգականք և բարեկամք ցաւ ի սիրտ կը ծանուցանեն զգառնաղէտ մահն՝

ՅԱԿՈԲ ԷՖ. ՊԱՐՏԻԶՊԱՆԵԱՆԻ

Յուղարկաւորութեան սգոյր հանդէսը պիտի կատարուի վաղը չաթթ, 4 Յունիս ժամը 3ին (Ք. Թ.) Կէտիկ Փաշայի Ս. Յովհաննէս եկեղեցին, ուր փոխադրեալ է հանգուցեալին մարմինը, և պիտի ամփոփուի Պալըքլըի գերեզմանատունը։

Կէտիկ Փաշա, 3/16 Յունիս 1905

[Մահագիր չընդունողներէն կը խնդրուի իրր այն նկատել զայս։

ՌՈՂՈՔԱԿԱՆ ԹԵՄ

Վաղը պիտի քարոզեն.—

Բերայի մէջ ժամը 1.15ին Բրօֆ. Ց. Հ. Ճէճիզեան։

Կէտիկ-Բաշայի Ամերիկեան վարժարանին մէջ ժամը 2.15ին Վեր. Սեգրաք Պեսիկեան։

Սկիւտարի մէջ ժամը 2.30ին Վեր. Ա. Պ. Շամամեան։

Պայազիտի մէջ ժամը 2.45ին Տօքթ. Ճ. Ֆ. Հէրիք։

Խասգիւղի մէջ ժամը 7ին Պատ. Ս. Ց. Զորիկեան։

ԲԱՐԻՁԻ ՊՕՐՍԱՆ

COURSE DE PARIS

16 Յունիս 1905

Ֆրանս. 3%	(3% Français)	98 65
Բէժի	(Tab. Turc)	393 —
Օսմ. Միացեալ	(R. Nv Unif.)	88 82
Երկաթուղի	(Lots Turcs)	133 50
Պանք Օթթ.	(Banque Ott.)	593 —
Թրանսվալ	(Transvaal)	90 —

ՍԵԼԱՍԼԸԳ ՐԵՍՄԸ ԱԼԻՍԻ

Տիւնքի Ճումսա կիւնիւ Սէլամլըգ բէսմը ալիսի Համիտկէ ճամիի չէրիֆինէ իֆրա պուլրուլմուշ տը։

ԹԷՊԼԻՂԱԹԸ ՐԵՍՄԻՅԵԷ

Տիւնքի ճումսա կիւնի Սէլամլըգ բէսմը ալիսիսէն սօնրա չաեան պուլրուլան միսսասէի Սէնիէի հաղբէթը Բաթիչահի իւզէրինէ Ըսկէճ վէ Նօրվէճ սէօվկէթինին Տէրսսաատէթ սէֆիրի օլուսզ պու քէրէ տէվլէթը միչարիլէյանը Վիեննա Սէֆարէթինէ թահվիլը մէէմուրեէթ իյլէյէն սաալէթինու Պաոն Պէգ Ֆրրիզ ճէնապլէրի սուրէթը ղայրը բէսմիյէսէ հուզուրը չէվքէթմէվֆիուրը հաղբէթը Թանարիսէ չէբէֆ միսուլէ նակլ օլունաղ Տէրսսաատէթէն ավսէթի միհնապկէթիյէ Խաքիրաի Հիմաեուն Միլիքանէյէ արզը բասիմէի վէսսա իյլէմիշ տիր։

ՆԵՐՔԻՆ

ԹՈՒՐՔԻՍ ԵՒ ՖՐԱՆՍՍ.—Վեհ. Սուլթանը Օսմանիյէ Ականակուռ պատուանշան շնորհեց Ֆրանսայի վարչապետ և երմտական նախարար Մ. Ռուվիէի։

ՕԼԿՍ. ԹԱԳՈՒՀԻՆ.—Յունաստանի Օլկս թագուհին «Ամֆիթրիթ» զբօսանաւով Տարանտէլ նաստ առջի ցերեկ։ Բերդերը թնդանօթաձգութեամբ բարեւեցին և ամրութեանց երեք զօրավարները զբօսանաւ երթալով յանուն Վեհ. Սուլթանին ողջունեցին թագուհին։ Տարանտէլի առջեւ գտնուող չոգենաւերը և քաղաքին հիւպատոսարանները դրօշազարդուեցան։ Հելլէն հիւպատոսը «Ամֆիթրիթ» երթալով բարի գալուստ մաղթեց։ Իրիկունը զբօսանաւը մեկնեցաւ և երէկ առաւ Պոլիս հասաւ Ռուսիա երթալու համար։ «Ամֆիթրիթ» չկեցաւ Պոլսոյ մէջ, այլ քիչ մը դադար առաւ Թարապիոյ առջեւ, ուր ողջունուեցաւ օտար պահակաւորներէն։ Հելլէն դեսպան Մ. Կրիբարիս դեսպանատան պաշտօնատարներով և գաղութին երեւելիներով, շոգեմակոյկներու մէջ դիմաւորեց արքայական զբօսանաւը, և գնաց ողջունեց թագուհին։ Գաղութին կողմէ պսակաձեւ շքեղ ծաղկեփունջ մը նուիրուեցաւ թագուհիին և կեռասի կողովներ նաւատներուն։ Յետոյ Պարիրաքը որ այս միջոցին մակոյկով Պօսֆիգիւղ կ'երթար, իր օրհնութիւնը տուաւ թագուհիին և նաւաղներուն։ «Ամֆիթրիթ» կարճ դադարէ մը ետք շարունակեց իր ճամբան դէպի Ռուսիա։

ԸՆԴՀ. ԱՄՍԱԹՈՇԱԿ.—Կայս. Իրատէ մը հրամայած էր մէյմէկ ամսաթոշակ բաժնել բոլոր պետական պաշտօնեաներուն։ Եւմտական նախարարութիւնը այսօրուընէ պիտի սկսի վճարումները։

ՇՈՒԷՏԻ Դեսպան Պառն Պէք Ֆրից որ նոյն պաշտօնով Վիեննա փոխադրուած է, երէկ ներկայ գտնուեցաւ Սէլամլըքի արդիւնքին և հրաժեշտ առաւ Վեհ. Սուլթանէն։ Մինչեւ նոր դեսպանի մը անուանումը դեսպանատան գործերը պիտի վարէ Ա. Թարդման Մ. Մարիէն։

ԷՎԴՈՔԻԱՅի նախարարութիւնը սկսաւ նորոգել տալ վերջին մրրիկէն վնասուած մզկիթները, վարժարանները և ուրիշ Վագֆի հաստատութիւններ։

ՊԱՐՍԻՑ ՇԱՀԷ այսօր Վիեննա կը հասնի։ Շահին հետեւորդներն են 96 հոգի, որոնց մէջ են իր զաւակը, թոռը պարսիկ վարչապետը, երկրագործական, կրթական նախարարները, Պոլսոյ պարսիկ դեսպան իշխան Միրզա Բիզա Խան, և ուրիշ անձնաւորութիւններ։

ԲՆՆԿԶ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎ.—Աքեայի մէջ կարգ մը քննութիւններ կատարելու համար քննիչ յանձնաժողով մը մեկնեցաւ հոն, որուն անդամներն են. Վերաքննիչ Ատանայի առեւտր. ճիւղին նախագահ Արիֆ պէյ, Ընդհ. Սպայակոյտի Տրդ. ճիւղին Տնօրէն Զօր. Շիւքրի փաշա, Սպարապետութեան չինութեանց ճիւղէն Բաւիմ փաշա և գընդապետ ԼաՀէմ պէյ։

ԵԱՅԱՑԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՑՈՒԹԻՒՆԸ.— Եաֆայէ կը գրեն Պաանարոթ.— Կաղայի չրջանակին մէջ գարիի հունձքը այս տարի չատ գոհացուցիչ է։ Կը յուսացուի որ 2 միլիոն քիլէի չափ գարի պիտի արտադրուի այս տարի, և մեծաքանակ մթերք ալ պիտի հանքարտի Կաղայի մէջ և չրջակայքը։ Ամէն տարի այս վաճառականութեան համար բազմաթիւ անպլիական շոգենաւեր կը վարտնին։ Գերմանական և խալական ֆիրմաներ եւանդուն գործունէութեամբ մը մասնաւոր ուղեւորներ կը ղրկեն գիւրացնելու համար իրենց առեւտրական գործառնութիւնները։ Նոյն իսկ նուազ կարեւոր վաճառքներու համար պաշտօնեայ կը ղրկեն, և կը յաջողին։ Երիկ մարդու և տղայոց յատուկ պատրաստ հագուստները ղլխաւորաբար Վիեննայէն կը ներածուին, և թէ այս հագուստներուն մեծ մասը Անգլիոյ մէջ կը շինուին, բայց շատը մեծ մասամբ Աստրիոյ ֆիրմաներուն կ'երթայ։

ՊԷՐՈՒԹի Ամերիկեան բժշկական վարժարանին տարեկան քննութեան ներկայ դտնուելիք Օսմ. քննիչ մարմինը Պէրութ ուղեւորեցաւ։ Այդ մարմինն անդամներն են Բժշկական վարժարանին դասաւանդութեանց վերատեսուչ Մահմուտ փաշա, արտաքին գործոց նախարարութեան ուսուցիչ դեր-գնդապետ Անմէտ պէյ և Կիւլխանէի ռազմական հիւանդանոցին ուսուցիչներէն հաղարապետ Էշրէֆ պէյ։

ԿԴԶԻի ԵՐԹԹԻԵԿը.— Հայտարարեցաւ և Մալթէփէի ճամբով Իշլանոց կղզիները երթեւեկութեան գիծ մը կը գործէ, անցեալ տարուընէ ի վեր։ Գիւղացիներու դիւրութեան համար, այս անգամ Մախսուսէ և Անատօլուի երեսակողին համախորհուրդ, նոր տոմսակներ հրապարակ կը հանեն այսօրուընէ, որոնք կամուրջէն մինչեւ կղզի պիտի արժեն։ Յարդ կամուրջէն Հայտարբաչա, անկէց Մալթէփէ և Մալթէփէէն կղզի զատ զատ տոմսակ կ'առնէին կղզեցիները։

ՍԵԼԱՆԻԿԻ ՄԷՋ ԵԼԵԿՏՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ.— Սելանիկի մէջ էլեկտրական լոյս և էլեկտրաքարշ թրամուայ հաստատելու մենաշնորհ տրուած էր Անգլիոյ Խորհրդարանի անդամ հանգուցեալ Սըր Աշմէթ Պարթէթի որմէ վոխանցուած էր Ֆրանսական Ընկերութեան մը։ Այս անդամ այդ արտօնութիւնը փոխանցուեցաւ Սելանիկի նաւահանգիստի շահագործման Ընկերութեան, որ պիտի սկսի գործադրութեան։

ԻԶՄԻՐ-ՔԱՍԱՊ. երկաթուղիին արժէքներու ընդհ. ժողովը գումարուեցաւ առջի օր, Դալաթիոյ մէջ։ Տեղեկագիրէն կը հասկցուէր թէ 1904ին գիծին ընդհ. հասոյթը եղած է 5,845,641 ֆր.։ Շահաբաժին որոշուեցաւ 25 ֆրանք իւրաքանչիւր արժեթուղթի։

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐը

ՇԲՈՏՐԱՑԻ ԵՐԿՐԱՇՆԱՐԺԸ.— Ընքոտրայի մէջ երկրաշարժը կը չարունակուի։ Մայիս 30 և 31ի գիշերը հինգ նոր ցնցումներ զգացուեցան։ 31ի օրը առտուան ցնցումը ուժգին էր, ատրբէրկեայ սրոտումներ լսուեցան և շուկային մէջ 5 խանութ փլաւ։ Ուրիշ մասներ ալ կան, բայց անոնք կորուստ չկայ։

ՄԵՆ ՇՈՒԿԱՑ, Իսկէնտէր Պօղազի, քաղաքի Աբէլ աղա Էմէքօղլեան դադրեցուց իր վճարումները, 2500 ոսկի պարտքով։ Պարտատէրը թէեւ պայմանաժամ խնդրեց, սակայն առնելիքատէրները նկատելով որ ան չպիտի կրնայ այդ գործին տակէն ելլել, պարտատարաքներու հետ հաշուակցելու համար կը բանակցին։

ԶՈՒԱՐՃԱԼԻ ԴՈՂՈՒԹԻՒՆ ՄԸ.— Զորեքշաբթի առտու զուարճալի գողութիւն մը պատահեցաւ Բերա, Ձիէէք փողոց սափրիչ Զենոբ Մուրատեանի խանութը։ Խանութը երկու յարկէ կը բաղկանար, որուն վերինը վարձած էր Թանաչ անուն դերձակ մը։ Ցիշեալին աշկերտը Աբոսգոլ 14 տարեկան տղայ մը, որ գիշերները խանութը կը պառկէր, գողութեան փորձ մը կ'ընէ հետեւեալ կերպով։ Աբոսգոլ գիտնալով որ իր վարպետը 200ի մօտ դրամ ունէր, որոնք աշկերտին սրտին իւղերը կը հալեցնէին, անձայն կը դողնայ և որպէս զի զինքը չեերբակալէն, զանազան միջոցներ ձեռք կ'առնէ, բայց ի զուր։ Նախ խանութին դուռները կը բանայ և բանային վրան կը ձգէ, յետոյ վեր ելլելով դրամը կ'առնէ և անկողնին մէջը կը կարէ, իր անուին ու գործիքները մասնաւորապէս կ'ընէ և վերջապէս բեռանը ձեռքերը և ոտքերը կը կապէ և սենեակին մէկ անկիւնը կը կենայ։ Առաւն երբ Զենոբ աղա խանութ կուգայ դան բաց գտնելով կը զարմանայ, իր գործիքները կը քննէ, բայց բան մը պակաս չգտներ և փոքր ձայնի մը վրայ կ'ելլէ կը տեսնէ որ տղան կապուած է։ Առանց հարցափորձի տղան ձեռքէ բանելով ստիպմանութեան կը յանձնէ։ Թէպէտ նախ տղան կ'ուրանայ թէ ուրիշ գողեր գործով գինքը կը կապեն և դրամին ալ կը ասնին, բայց ստիպմանութեան մէկ խիստ հարցափորձէ վերջը տղան կը խոստովանի թէ գողինք է։ Տղան, պնդումներու վրայ ինքզինքը հոն կը կապէ, ինչպէս կապած էր խանութին մէջ։ Ներկաները կ'ապշին այս զուարճալի

ԴԱՍԱԳԻՐՔԵՆ ՍՈՒԶ ՈՒՍՈՒՑԻՉԸ

Մերթ ընդ մերթ գանգատներու արձագանգներ կը լսուին լրագրական էջերուն մէջ թէ ուսման և դիտութեան դանազան ճիւղերուն համար պէտք եղած նպատակայարմար դասագիրքերը չկան, կամ արդէն եղածներն մեծ մասամբ զուրկ են մանկավարժական ուղղութենէ և անյարմար՝ այս կամ այն ասպիճանի աղոց ըմբռնումին։

Թէ այս գանգատները կամ դիտողութիւնները՝ որոնք կուգան անտարակոյս ուսուցիչներու կողմէն, ի՞նչ տեսակէտով միայն արդարացի են և ո՞ր ասպիճան իրաւացի, և անոնք ե՞րբ իրապէս վերջ կրնան գտնել, այս մասին կ'արժէ խորհրդածութիւններ կատարել խնդիրը նկատողութեան առնելով յօգուտ ուսուցիչներու և ուսանողներու։

Այս խնդրոյն քննելի էական կէտերն կը կազմեն հետեւեալները.

Ա.— Ուսմանց և դիտութեանց իւրաքանչիւր ճիւղի համար դասագիրքեր կա՞ն։

Բ.— Այդ դասագիրքերուն մէջ չը կա՞ն մինչ լաւագոյնները և արդի պահանջմանց համապատասխան յօրինուածները։

Գ. — Ամէն ճիւղի համար անհրաժեշտ է որ աշակերտին ձեռքը դասագիրք գտնուի։

Դ. — Ի՞նչպէս կը դասախօսուին կամ պէտք է որ դասախօսուին ուսումներ և դիտութիւններ դպրոցներուն մէջ։

Անհաւասիկ չորս կարեւոր պարագաներ, զորս հարկ է ուշադրութեան առնել եզրակացութեան մը յանգելու համար։

Նախ, առաջնոյն քննութեամբ կը տեսնուի թէ քանի դպրոցական ծրագիրները ընդարձակուած են կարեւոր ուսումներ ներմուծելով անոնց մէջ. հետզհետէ անոնց ուսանման համար ալ դասագիրքեր պատրաստուած են դանազան հեղինակներու կողմէն, այնպէս որ չկայ ուսում կամ դիտութիւն մը որ իր դասագիրքը չունենայ համառօտ կամ ճոխ պարունակութեամբ և դանազան մեթոդներու հետեւողութեամբ։ Ժամանակի զարգացման խնդիրը անշուշտ իր և կարեւոր դերն ունի դասագիրքերու պատրաստութեան մէջ, և մէկ ճիւղի համար հրատարակուած դանազան դասագիրքերը կ'ապացուցանեն թէ մրցումը սկսած է արդէն հեղինակներու մէջ, և դերազանցելու ձիգ մը, դէպի լաւ ձգտում մը կայ միտ։

Դասագիրքերուն մէջ ամէնէն կարեւորներն են ընթերցանութեան դասագիրքերը կամ մայրենի լեզուները, որոնցմէ յետոյ կուգան քերականութիւն, աշխարհագրութիւն, բնապատմութիւն, տնտեսագիտութիւն, թուաբանութիւն են։

Ծաղկոցի և տարրական նախակրթարանի Ա. և Բ. դասարաններուն համար պատրաստուած ընթերցանութեան դասագիրքերն՝ որոնք տեսակով ամէնէն ստուար թիւը կը կազմեն, ամէնէն աւելի քննադատութեան և խնդրոյ առարկայ եղողներն են, վասն զի անոնք դրեթէ ամենամեծ մասամբ աղոց կանանքին, լեզուին և մտային կարողութեան յարմարցուած չեն, և նիւթերու դասաւորութենէ ու ասիճանաւորումէ զուրկ են, որով կը դժուարանայ ուսուցիչներու և աշակերտներու գործը։ Ասոնցմէ զատ միւս բոլոր դասագիրքերը պէտք չէ որ այնքան արհամարհանքի և խծբծանքի ենթարկուին ուսուցիչներու կողմէն, քանի որ մեծ մասամբ կը պարունակեն կարեւոր եղած նիւթերն ու գիտելիքները, զորս պատչաճ և օգտակար եղանակաւ և ի հարկին կարեւոր յաւելուածներով կամ ընդլայնումներով և մերթ մանակի յապաւումներով աւանդել փորձ և հմուտ ուսուցիչներու գործն է։

Բ. պարագային դալով՝ թող չկարծուի թէ ուսման և դիտութեան այս կամ այն ճիւղի վերաբերեալ բոլոր դասագիրքերն ալ առ հասարակ զուրկ են մեթոտաւոր ուղղութենէ և արժանիքէ. ընդհակառակն կան անոնց մէջ այնպիսի հրատարակութիւններ, որոնք իրենց պարունակութեամբն ու ուսուցման լաւագոյն եղանակովն կրնան իրաւամբ ծրագրի մը պահանջները գոհացընել և ուսուցիչներու կամ ուսանողներու ձեռքը օգտակար գործիք մը ըլլալ, բաւական է միայն որ ուսուցիչները իրենց մասնաճիւղերուն վերաբերեալ բոլոր գիրքերն ու հեղինակութիւնները քննած ըլլան, և գիտնան արժանաւոր ընտրութիւն մը ընել ասոնց մէջ։

Քերականութեան դասագիրքերուն մէջ այն է ամենէն լաւն ու օգտակարը որ դէպքերէն կանոնը հետեւցընել կուտայ աշակերտին, և իւրաքանչիւր կանոնի կիրառութեան համար միշտ գործնական հրահանգներով ճոխացած է։

Թուաբանութիւններուն մէջ այն է ամէնէն ընտրելին որ չատ մը կանոններ չաւանդեր, այլ խնդրոյն լուծումը ուսուցչին օժանդակութեամբ կատարել տալէ յետոյ կը թողու անոր հետեւցնել տալ կանոնը ճարտար հարցումներու միջոցաւ, որով աշակերտն ինք գտած և չինած կ'ըլլայ կանոնը, և երբեք դժբաղդութիւնը չունենար մոռնալու զայն, ինչ որ կը պատահի թուքակրէն կանոնները գոց ընողներուն։ Եւ այս պայմանաց համեմատ պատրաստուած դասագիրք գտնել կարելի է։

Միւս դասագիրքերն, օրինակի համար, աշխարհագր., բնապատմ., տնտեսագիտ. են. հոգ չէ թէ իրենց մէջ չունենան միւսներուն չափ մեթոտաւոր կարգ և ուղղութիւն, կը բաւէ միայն որ կարեւոր և պիտանի եղած նիւթերն ու գիտելիքներն ամփոփ և յատակ կերպով պատկերացնեն, և պարունակեն քարտէսներ, պատկերներ, կամ դասախօսուին պատի խոշոր քարտէսներու և պատկերներու վրայ։

Ընթերցանութեան դասագրքերուն մէջ ալ, բաց է Ծաղկոցի և տարրական դասընթացքի յօրինուածներէն՝ որոնց մէջ ալ կը գտնուին մէկ երկու ըստ բաւականին յարմարագոյններ, կան արդարև նիւթի, լեզուի, ոճի, բարոյականի մասին արձակ և ոտանաւոր ընտիր հատուածներ պարունակող նպատակայարմար գործեր, միայն թէ ուսուցիչը գիտնայ անոնց մէջէն լաւագոյն ընտրութիւն մը ընել և օգտակար հանդիսացնել բոլոր դասախօսութիւնները բառագիտական, ուղղագրական, քերականական, իմաստալից վերլուծութեան, գրագիտական և այլ վարժութիւններով։

Գ.—Ինչ հարկ ուսման ամէն մէկ ճիւղի և դպրոցական ամբողջ շրջանի դասընթացքներուն համար զատ զատ դասագիրք որոշել և աշակերտներուն պարտաւորիչ ընել, որոնք անոնց վրայ կապուած մնալով չատ անգամ մեքենաբար գոց ընելու հարկին մէջ գտնուին, և տեղ տեղ դասատուք ալ իրենց հանգամանքն ու դիւրութեանը համար անուս ընեն կամ թողուն աշակերտներուն այս թիւր և հակամանկավարժական ընթացքը շարունակել ի վնաս իրենց։

Արդէն գրեթէ չկան ամէն ուսման կամ դիտութեան համար տարիներու բաժնուած կամ համակերդուն դրութեամբ ընդլայնուած դասագիրքեր, և քանի որ ուսուցիչներ կրնան առանց դասագրքի ալ այլ և այլ հեղինակութիւններէ անհրաժեշտ եղած հետաքրքրական ծանօթութիւններն ու գիտելիքները քաղելով գեղեցիկ փունջ մը պատրաստել և աւանդել աշակերտաց բերանացի և երբեմն ալ գրաւոր, ինչ որ ուսուցիչ մը նախապատրաստութեան և յաջողութեան էական պայմանն է, այլ եւս կարծեմ աշակերտաց ձեռքը տալու համար յարմար դասագիրք փնտուելու հոգս ու պէտքը այնքան անհրաժեշտ և ստիպողական չհամարուիր. և այն ատեն եթէ նոյն իսկ աշակերտներուն ձեռքը ո՛և է գիրք մը ալ գտնուի, ուսուցիչներն ի զուր դասատուու աւելորդ հարկին մէջ չպիտի գտնուին։

Բայց ընթերցանութեան դասագիրքը հարկ է որ իւրաքանչիւր աշակերտի ձեռք գտնուի, պայմանաւ որ անխորտ ամէն դասագիրք միեւնոյն հեղինակի պատկանող՝ չգործածուի վարժարանի մը Ա. դասարանէն սկսեալ վերջին կամ բարձրագոյն դասարանին համար, այլ լաւագոյն ընտրութեամբ մը դանազան հեղինակներու գործերէն օգտակարագոյններն յատկացուին երեք դասընթացքներու համար։

Գ.— Տակաւին դաւառական չատ մը գպրոցներու մէջ Ծաղկոցներէն սկսեալ ընթերցանութեան դասագիրքերը չեն ծառայեր այնքան Հայ լեզուի կատարեալ մշակութեան. աչակերտը գրեթէ միայն թուքակրէն կարդալու կը վարժուի, ընդհանրապէս զանց կ'առնուին յատակ հնչման, ուղիղ և բնական արտասանութեան կամ ասոգանութեան փոյթն ու խնամքը, և ոչ իսկ հոգ կը տարուի ըստ արժանւոյն ուղղագրութեան, իմաստներու բացատրութեան և բարոյական հետեւութեանց, որով ազուն ընթերցանութիւնը չոր ու ցամաք մեքենական աշխատութիւն մը և աւելորդ յոգնութիւն մը կը դառնայ, մինչ նպատակաւոր և բազմադիմի վարժութեամբ ընթերցումը ազուն միտքն ու սիրտը կը զարգացնէ, լեզուն կը գեղեցկացնէ և ճաշակը կը կրթէ։

Իսկ քերականութեան և թուաբանութեան համար բառ առ բառ կանոնները գոց ընել տալու յոռի սովորութիւնը տակաւին վերջ գտած չէ մեր դաւառական դպրոցներէն չատերուն մէջ։ Ահա այս պատճառաւ է որ ուսուցիչներ յաւ ի սիրտ տեսնելով աշակերտաց մեծագոյն մասին անյաջողութիւնը ինքզինքին արդարացնել կ'ուզեն դասագիրքերուն անյարմարութիւնն ու թերութիւնները թուելու եղնելով, մինչդեռ ուսուցիչն ինքն ուսուցանելու արուեստին և մեթոտին տէրն ըլլալով հարկ է որ դասագրքին այս կամ այն մասին ունեցած թերութիւնները լրացընելու ջանայ։

Բնապատմութեան, աշխարհագրութեան, տնտեսագիտութեան են. ուսուցումն ալ գրեթէ մեծաւ մասամբ գոց ընել տալու դրութեամբ կը կատարուի, և ասոր անվրէպ հետեւանքն եղող անյաջողութիւնը կը վերագրուի դարձեալ դասագրքերու անկատարութեան։

Իրաւ է թէ ըսուած է որ գործիքը լաւ ըլլալու է, որպէս զի կարելի ըլլայ դիւրին, արագ և կատարեալ գործ մը արտադրել, բայց պէտք է խոստովանիլ թէ ամէնէն լաւ գործիքն ալ անպէտ կը դառնայ անվարժ և համբակ արհեստաւորին կամ գործաւորին ձեռքին մէջ. և մինչ հմուտ և ձեռնհաս ուսուցչին ձեռքին մէջ թերակատար դասագիրք մը կրնայ օգտակար հանդիսացուիլ, մանկավարժական լաւագոյն գիրքը անգիտակ ուսուցչի մը ձեռքը կրնայ անօգուտ ըլլալ։

Հաւաստողներ եղան թէ գիւղի մը ուսուցիչը մեր մանկավարժական քերականութեան մը դասագիրքը բառ առ բառ գոց ընել կուտայ։ Գուցէ ուրիշներ ալ այդ կարգի մանկավարժական գործերը արհամարհելով չուզեն անոնցմով զբաղիլ և զբաղեցնել աշակերտները։

Արդ ինչ ընէ դասագիրքը, ինչ ընէ մանկավարժ հեղինակը, երբ ուսուցիչը չի դասախօսեր դասագրքին ուղղութեան և հեղինակին հրահանգներուն ու ցոյց տուած մեթոտներուն համաձայն։

Ուրեմն պէտք է որ ուսուցիչը իրեն յատուկ արուեստ մը բրած ըլլայ ուսուցչութիւնը, անոր մէջ յաջողելու գաղտնեաց խորը թափանցէ, անոր ընտրելագոյն և արդիւնաւոր մեթոտները ուսումնասիրէ. այն ատեն չպիտի փափաքի միայն որ դասագիրքերը այնքան դիւրասոյց, այնքան հասկնալի կերպով պատրաստուած ըլլան որ աշակերտները ինքնին կարող ըլլան նոյն իսկ առանց ուսուցչի սորվիլ, այլ ինք պիտի դնէ անոնց մէջ իր իսկ հեղինակութիւնն ու աշխատութեան լաւագոյն բաժինը։

Այլ ևս կը յուսամ դժուար պիտի չըլլայ հետեւցնել և համոզել թէ դասագիրքէն առաջ կարեւոր է ուսուցիչը, որ իբրեւ գիտուն ճարտարապետ պիտի գործէ դասերուն յատակագիծերուն լաւագոյն կազմութեանը և անոնց ըստ նորագոյն և գեղեցկայարմար դրութեան կիրարկութեանը համար։

Եթէ կեդր. Պտակ. Ուսումն. Խորհուրդը դպրոցական ծրագրի և Կազմ. Կանոնագրի բարեփոխութեան խնդրոյն հետ նկատողութեան առնէ նաեւ ուսուցիչներու ընտրութեան և վիճակի բարւոքման կենսական հարցը, մանաւանդ գաւառներու մէջ պաշտօնավարող դաստիարակութեան կոչումին և պարտականութեան գիտակ ուսուցիչներու թուոյն յաւելման և անվհատ գործունէութեան նպաստող պայմաններու կարեւորութիւնը, գեմնալով որ անոնք չատ անգամ անտեղի յարձակմանց և անհաճոյ զրկանաց ենթակայ են, ամենամեծ ծառայութիւնը մատուցած պիտի ըլլայ մանուկներու կրթական գործին, վասն զի ինչպէս դասագիրքն առաջ՝ այնպէս ալ, կը կարծեմ թէ, ծրագիրէն և կանոնագիրէն առաջ դարձեալ ուսուցիչն է կարեւոր, որ պիտի գործադրէ անոնց տրամադրութիւնները ճշդութեամբ և օգտակարապէս, ցորչափ Գաւառ. Ուսումն. Խորհուրդներ ամէնուրեք գոյութիւն չունին։

Ակներեւ ճշմարտութիւն մըն է որ եթէ գաւառներու մէջ տեղ տեղ կրթական գործը լաւ և արդիւնաւոր հիման մը վրայ դրուած է համաձայն կեդր. ուսմանց ծրագրի և Կազմ. Կանոնագրի, տիպար ուսուցիչներու նախաձեռնութեան և մանաւանդ խնամոց արդիւնք է առաւելապէս, միայն թէ, բացառութիւնները յարգելով, այդ ուսուցիչներու յեղյեղուկ, անկայուն և մանաւանդ ամենաճոխ ուրախութեանց և զրկանաց ենթակայ անգնահատելի և արգահատելի վիճակն է որ տեւական և հետզհետէ բարգաւաճ յառաջդիմութիւն մը չի կրնար երաշխաւորել դաւառական դժբաղդ վարժարաններուն համար։

Ս. ՊԵՏՐՈՍԵԱՆ

ՊՐՈՒՍԱՑԻ

ԱՐԵՒ. ՈՐԲԱՆՈՑ-ԴՊՐՈՑԻՆ ՇՈՒՐՋ

ՀԻՄՆԱԴԻՐԻՆ ԽՍՏԳԵՐԸ

Մեծ. Խմբագիր-Տէր

«Մանզումէ»ի

Իրազեկ բաներ մը կ'ըսէ ձեր թերթով, որ միայն ամենապարզ խնդիր մը չփոթութեան առարկայ կ'ընէ, ուստի պարզ, կարճ ու կտրուկ բացատրութիւն տալ հարկ համարեցայ։

Ներփակ «Շրջաբերական»ը խնդրեմ հաճեցէք քննել և ուսումնասիրել։ Հոն ստորագծած եմ Ազգապետարանի «միակ խնդիրը», որ է «չէնքեր և հողեր» որբանոցին յատկացնել օրինաւորապէս։ (Տես նամակ Ազգապետարանի թիւ 856 Փետր. 28, 1902)։

Ինչպէս «Շրջաբերական»էն կը տեսնէք ճիշդ, բառ առ բառ ու կէտ առ կէտ ալ սոյն «ՄԻԱԿ ԽՆԴԻՐ» կատարելապէս ստացած է իր լուծում չնորհիւ կայսերական կառավարութեան Բարձրագոյն դատարանի։

Այս կատարուելէ ետու այժմ ԻՆՁՄէ կը պահանջեն երկրորդ դիմումով մը տրուած ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՎՃԻՌ ՓՈԽԵԼ տալ և այսինչ ԱՆՁԻ անուան փոխանցել հողեր և չէնքեր։

Հիմա ալ ՆՈՐ բան մը կը պահանջեն, «4 մանգաէներու քննել տար», կ'ըսեն, «Իլամը, և անոնց արձակած վճիռէն թող որոշուի խնդիրը»։ Մենք կ'ըսենք թէ, ԴՈՒՌ ըրէք զայդ, պաշտօնական կերպով, թող 100 մանաւէտ քննեն զայն և արդիւնքը հաղորդեն մեզ ՊԱՇՏՕՆԱՊԷՍ, ԻՐԱՔԱՆՉԻՒՐԻ ՍՏՈՐԱԳՐՈՒԹԵԱՆ տակ, և ես գիտեմ թէ ի՞նչ պիտի ըլլայ յաջորդ ընելիքս։

Էն զարմանալին այս է, սակայն, որ բոլոր խնդիրը Մր. Բիքի ձեռամբ կը կատարուի, մինչ նա չէ բոլորկանաց Ազգապետը։

Գ. ՊԱՂՏԱՍԱՐԵԱՆ

* * *

ԳՐՔԱՓԵԹԱԿԱՆ

ՊԱՂՏԱՍԱՐԵԱՆ ՈՐԲԱՆՈՑԻ Ի ՊՐՈՒՍԱ

1875ին, Պրուսա գտնուելով, Որբանոցի մը պէտքը զգացինք և իսկոյն անոր բացումին ձեռնարկեցինք, յանձնելով որը մի աղջիկ այրի կնոջ մը խնամոց և հոգատարութեան։ Սա տեղի ունեցաւ 1875 Յուլիս 1/13ին և նոյն օրն եղաւ Օր ծննդեան Պաղտասարեան Որբանոցին ի Պրուսա։

Ի սկզբան վարձու տուներու մէջ յառաջ տարինք սկսուած և օր քան զօր աճած, զարգացած գործը. 1882ին սարքացնէ ձեզ և այն թուղթը հոգ է, ձեր մտիկը, և տեղերնուդ չէ՛ք շարժիր։ Զենէ ո՛վ համարձակեցաւ Պիլին դէմ ելնել։ Ես միայն, սա կոյր վիճակիս մէջ, տեսայ այդ գործը։ Սը հիմա կ'ուզէք որ ահագին հարստութիւն մը կորսնցնեմ ձեր յանցանքովը, և շարունակեմ այս թշուառ կեանքը։ Հա՛, ասա՛նկ կ'ուզէք։ Աստուծոյ սիրուն, սա մարդիկը գտէ՛ք։ Ասիկա այնպիսի ձեռնարկութիւն մըն է որ քիչ մը քաջութիւն կ'ուզէ և այդ քիչ մը քաջութիւնը չունիք։

—Դեռ ի՞նչ կ'ուզես, Բիրս, ստակները մեզի մնացին, ըսաւ մէկը։

—Ես յետոյ ո՞վ կ'ըսէ որ այս երջանկաբեր թուղթը տեղ մը թաղուած չէ, յարեց ուրիշ մը։ Սա ոսկիները ա՛ռ, Բիրս, և ասանկ մի պուչտար փողոցին մէջ։

Պուչտալը ճիշտ բառն էր։ Այս դիտողութիւնները այն ատենն գրգռեցին կոյրը որ ինքզինքը մոռցաւ և ըսկրաւ գաւազանի հարուածներ տալ մօտը գտնուողներուն։ Անոնք ալ հոգութիւններ և զարհուրելի սպառնալիքներ ըրին, ի զուր փորձելով գաւազանը յափշտակել ձեռքէն։

Այս կռիւը փրկեց մայրս ու զիս, վասնզի դիւղին կողմէն յանկարծ լսեցի ձիերու արշաւ մը, և գրեթէ անմրջապէս եւրը հրազէնի հարուած մը փայլեցաւ և որոտաց խարակին վրայ։

(Շարունակելի)

ՄԱՆԶՈՒՄԷԻ ԹԵՐԹՕՆԸ —= 8 =—

ԳՐԵՑ ՍԴԻՎԷՆՍԸՆ

ԹԱՐԳՄԱՆԵՑ ԺԻՐԱՑԸ

ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆ

ԴԷՊԻ ԳԱՆՁԻ ԿՂԶԻՆ

Դ.

ՆԱՒԱՊԵՏԻՆ ՄՆՏՈՒԿԸ

—Դո՞ւք, վարը եղողներ, Պիլին վրայ թուղթ մը գտա՞ք, պոռաց կոյրը։

Նաւապետին դիակը պպտելու համար գետնայարկը մնացողներէն մէկը այս միջոցիս երեւցաւ դրան սեմին վրայ և,

—Մենք առաջ արդէն խուզարկե՛ր են Պիլը, ըսաւ։ Բան մը չկայ վրան։

—Պանդոկին մարդիկը խուզարկած ըլլալու են, մանաւանդ պզտիկ տղան, ոնոց կոյրը։ Ինքո՞ր աչքերը չփորեցի։ Բայց թերեւս տակաւին անցած չէ ժամանակը։ Քիչ մը առաջ հոս էին քանի որ դուռը փականքուած էր, ինչպէս որ տուգեցի։ Ցրուեցէք, տրդա՛ք, և փնտռեցէք։

—Իրենց ոչտանակը հոս ձգեր են վառած վիճակի մէջ, ըսաւ պատուհանէն նայող մարդը։

—Փնտռեցէ՛ք, խուզարկեցէ՛ք ամէն կողմ, քանդեցէ՛ք տունը քար առ քար, պոռաց Բիրս, գաւազանը գետին զարնելով։

Այն ատեն դժոխային աղմուկ մը ծայր տուաւ մեր հին պանդոկին մէջ։ Կարասիները կը կոտրուէին, դուռները կը խորտակուէին, պատուհաններուն ապակիները կտոր կտոր կ'ըլլային։ Յետոյ մարդիկը դուրս ելան և յայտարարեցին որ պանդոկին տէրերը անյայտ եղած էին։

Այս միջոցին երկիցս լսուեցաւ նոյն այն սուլումը որ ա՛նքան խռովք պատճառած էր մօրս։ Ենթադրած էի որ ասիկա կոյրին մէկ նշանն էր իր մարդիկը յարձակման հրաւիրող։ Բայց սուլումներուն եկած տեղէն և առաղակներուն վրայ անոնց առաջ բերած տրպաւորութենէն հասկցայ որ վտանգի մը գոյութիւնը կը ծանուցուէր իրենց։

—Տիրքն է, ըսաւ անոնցմէ մէկը։ Եւ երկո՛ւ ռուլում։ Փախչելու է, ընկերներ։

—Ո՞վ է նայիմ անիկա որ փախչելու խօսք կ'ընէ, պոռաց Բիրս։ Սա անխելք ու վատասիրտ Տիրքը վախնալուն համար մենք ալ պէտք է վախնանք։ Զէ՞ք գիտեր անոր ի՞նչ մարդ ըլլալը։ Ականջ մի՛ կախէք անոր սուլումին։ Զա՛րժեր։ Սա մարդիկը գտնելու է, որոնք չեն կրնար հեռուները ըլլալ։ Գրա՛ւ կը դնեմ որ քիթերնուդ տակը եղածը չէք տեսներ, չա՛ր ծերունիներ։ Եթէ ես աչք ունենայի՝...։

Այս կոչը բաւական տպաւորութիւն ըրաւ։ Երկու հոգի սկսան պանդոկին շուրջը գտնուած մացառները պրպտել։ Բայց ինծի անանկ եկաւ որ եռանդ չկար, և մարդիկը միշտ կը խորհէին այն վտանգին վրայ զոր սուլիչը ծանուցած էր իրենց։ Իսկ միւսները վրանքի մէջ էին և չէին շարժեր։

—Ապո՛ւշներ, պոռաց կոյրը, մտածեցէք որ ձեռքերնիդ երկնցնելով միլիոններ պիտի ունենաք ու չէք երկնցըներ և կը թողուք որ միլիոնները ուրիշին երթան։ Դիտէք որ թուղթի կտոր մը իշխաններու չափ պիտի հաւլումներուն եկած տեղէն և առաղակներուն վրայ անոնց առաջ բերած տրպաւորութենէն հասկցայ որ վտանգի մը գոյութիւնը կը ծանուցուէր իրենց։

—Տիրքն է, ըսաւ անոնցմէ մէկը։ Եւ երկո՛ւ ռուլում։ Փախչելու է, ընկերներ։

—Ո՞վ է նայիմ անիկա որ փախչելու խօսք կ'ընէ, պոռաց Բիրս։ Սա անխելք ու վատասիրտ Տիրքը վախնալուն համար մենք ալ պէտք է վախնանք։ Զէ՞ք գիտեր անոր ի՞նչ մարդ ըլլալը։ Ականջ մի՛ կախէք անոր սուլումին։ Զա՛րժեր։ Սա մարդիկը գտնելու է, որոնք չեն կրնար հեռուները ըլլալ։ Գրա՛ւ կը դնեմ որ քիթերնուդ տակը եղածը չէք տեսներ, չա՛ր ծերունիներ։ Եթէ ես աչք ունենայի՝...։

Այս կոչը բաւական տպաւորութիւն ըրաւ։ Երկու հոգի սկսան պանդոկին շուրջը գտնուած մացառները պրպտել։ Բայց ինծի անանկ եկաւ որ եռանդ չկար, և մարդիկը միշտ կը խորհէին այն վտանգին վրայ զոր սուլիչը ծանուցած էր իրենց։ Իսկ միւսները վրանքի մէջ էին և չէին շարժեր։

—Ապո՛ւշներ, պոռաց կոյրը, մտածեցէք որ ձեռքերնիդ երկնցնելով միլիոններ պիտի ունենաք ու չէք երկնցըներ և կը թողուք որ միլիոնները ուրիշին երթան։ Դիտէք որ թուղթի կտոր մը իշխաններու չափ պիտի հա-

ՊԱՏԱՐԱԳԱՅԻՆ ԽՈՍՔԵՐԸ

ԱՐԵՒԵԼԵԱՆ ՀԱՅԱՍԱՆ ԹԵՐԹԵՐՈՒ ՄԷՋ

Ֆրանսական Հայասան Թերթերուն մէջ Հոգեւոր Ժողովը գումարուելու ի Պրուսա, Պատ. Պաղտասարեան Որբանոցի պաշտօնական կնիքով և իր տարագրութեամբ սա՛ հետեւեալ խոսմնագիրը տուաւ Ժողովին. — «Որբանոցի Տնօրէնութիւնը կ'ապահովէ որ Որբանոցի կալուածներն, չէնքերն և շարժական կահք ու կարասիք միշտ Հասատուրեան ստացուածքներն պիտի լինին, և բնաւ ուրիշ նպատակի պիտի չգործածուին»։

Քիչ մը վարը նոյն տողերուն, կը յաւելու յօդուածագիրը.

«Այսօր Որբանոցը ձեռքը կտոր մը պաշտօնական թուղթ չունի ցոյց տուող թէ այս չէնքեր և կալուածքներ միշտ Հասատուրեան պիտի մնան։»

Յետոյ կը շարունակէ, «Կը կրկնենք հոս մեր ըսածը... կ'ուզենք որ օրինական կարգադրութիւն ըլլայ, Որբանոցին բոլոր ստացուածքները Հասատուրեան թողու համար... Ուստի կը խնդրենք Պատ. Պաղտասարեանէն որ իր խոսմնագրին համեմատ և առաջին պատուհեամբ կատարէ պէտք եղած օրինական ձեռակերպութիւնները ապահովութեան համար։

Նոյն յօդուածին մէջ նոր գրերով սա՛պէս ամփոփուած է բոլոր պահանջը. — «Ահա լրաց ներկայ վիճակը Ձեր Խնամակալութիւնը կը բերէ Հոգեւոր Ժողովին առջեւ, որպէս զի հարկ եղածը ընէք յանուն Որբանոցի՝ զրկելով հաւաքեալ ստակներով առնուած չէնքերը ու կալուածներն շարունակ սոյն հասատուրեան մնալու համար ապառով օրինական վիճակի մէջ դնել»։

Արդ, ըստ այնմ, Հոգեւոր Ժողովն ալ խնդիրը Ազգապետարանի յանձնեց, որ 1902 Փետր. 28 և 856 թիւ. Պաշտօնագրով սա՛պէս գրած էր մեզ։— Միակ խնդիրն է Հասատուրեան չէնքերը օրինապէս ապահով դիրքի մէջ դնել... Ուստի ամէնէն առաջ պէտք է օրինօք պատրաստուած գրութիւն մը տալ Ազգապետարանին, յայտարարող թէ հասատուրեան բոլոր շէնքերը եւ հողերը ոչ եւ է ժառանգակցութեան կապակցութեան զերծ են եւ թէ անպայմանի կերպով Պաղտասարեան Արեւելեան Որբանոցին կը պատկանին։

«Ասիկա պիտի պահանջէն իրմէ» կը գրէ յօդուածագիրը վերոյիշեալ յօդուածին մէջ, իբր վերջաբան. «Հոգեւոր Ժողովը», «Ազգապետարանը» և «բոլոր արդարասէր անձանց» պահանջման։ Ուստի այսուհետև կ'ակնկալենք աւելի քաջալերութիւն և ձեռնտուութիւն մեր գործին մէջ։

Գ. ՊԱՂՏԱՍԱՐԵԱՆ

ՀԻՄՆԱԴԻՐ

Պրուսա, Սեպտեմբեր 1904.

* * *

Խիստավէնտիկեար վիլայէթը ճէլիլէսի ճանիպի ալխինէ,

Աթուֆէթլու էֆէնտիմ Հաշրէթլէրի,

Մէմալիքը Մարմարայի Շահանդէսի միթէմէքիքին Բրօթէսթան ճէմա՛աթը ասնաղը խարաթ ու հասանաթը իլէ մէմալիքի սարիէսէ միթէմէքքին ֆազլ զէվթէրն վէրմիշ օլարգլարը ի՛անէ ագչէլէրիյլէ Պրուսատա Մօլլա Արապ մահալլէսինտէ թէէսիս վէ «Տար իւշ Շէֆթաղա» նամբյլա մէվսում վէ Բրօթէսթան ճէմա՛աթը էյմա՛նդնին թա՛լիմ ու թէրպիյէսինէ մախսուս տար իւլ էյթամ իթթիխազ էյլէմիշ օլարդրմ մա՛լիմ էլ հուտուտ վէ մա՛միւէթմի-

լաթ պիր պապ էպնիյէ իլէ, երնէ Մօլլա Արապ մահալլէսինտէ վագը՝ մա՛լիմ էլ հուտուտ սէքիզ գրթ՝ա արասայը փէյ տէր փէյ իլթիրա էտէրէք, պա՛գըլարընը միթէքվէֆիյէ հարէմմէ համրմ նամընա վէ պաղըլարընը տախի քէնտի նամրմա գայտ էթտիրէրէք, օլ սուրէթլէ սէնէտի Խագանիլերինի տակ էթմիշ իսմի։ Մուսխարէնի ֆամիլեամ իլգէրինէ գայտ էթտիրմիշ օլարդըմ գրամը, մուամալէյանդան վէֆաթըլար՝ չէրան վէ զահիրէն պիր գրամը պանա վէ գրամը տիկէրի տախի մախտումմի Վիրի էֆէնտիյէ թէվարիւս վէ ինթիզալ էյլէմէսիյլէ, մախտումմի մուամիլէյէնէ իսապէթ չէտէն մրգտարը տախի պէլ ալթիրէ քէնտի էօնէմմէ չէվիրմիշ իսէմ տէ, հագրգարը հալտէ էմլաքը մէգքիւրէնին քեսֆիֆէտի ասհաղը խայրաթ թարաֆընան վէրիլէն ագչէ իլէ, վէ էյթամէն թէրպիյէ վէ թանսիլի մագսատիյլէ իշթիրա էտէմիշ պուլունարդընան, վէ մէգքիւր էմլաքտա, նէ՛ միթէքվէֆիյէ զէվճէմին, նէ՛ մախտումմի Վիրինին, նէ՛ ամիրլէրինին վէ նէ՛ տէ վերէսէի սարէնին հիշ պիր կէօնա հագգը թէմմլիլիք վէ թասարրուֆիքմէդ օլմայաղ, էմլաքը մէգքիւրէնին մուէսսիսի պուլունարդը հասէպիյէ, քէնտի նամրմրդա էօնէմիլէ կէնիրիմիշ իսէ տէ, պունլարընը քեսֆիֆէտինին մուվազանէսին վէ նամը միսթամար սուրէթիյէ էօնէմիզդէ մուգայէտտ պուլունմամշ ալդուգունա իպդար վէ իթթիրաֆ էթմէքլէ պէրա-պէր, հիյնի վէֆթէրնամա պիր կէօնա գարբէրգէրդա մէյտան գալմամագ իւզրէ, ճէմաթմրմզդէն Տէրսաատէթ ուսում Բրօթէսթան Վէքիլէթի թարաֆընա թիսեար խոսիմէք իւզրէ, մար իւլ արզ խուսուսաթընը պիր հէօճէյիթի չէրիյէէ բարիք էտիրմէսի խուսուսունա, խթիսամրն թարաֆը Շէրը Շերիֆէ հավալէ պուդրուլմասընը արզ ու խթիրնամ էյլէրիմ։

Օլ պապտէ էմր ու ֆէրման հազրէթի մին լէյ իւլ էմրին տէր։

Ցի 25 Մայիս 1320

ԻԼԱՄԸ ՇԷՐԻ ՍՈՒՐԻԼԹԻ ՏԻՐ

Մարմարայի Պրուսա մահալլաթինան Մօլլա Արապ մահալլէսի միթէմէքիլէրինէն, վէ թէպասի Տէվլէթի Ալիյէնին էրմէնի միլլէթինէն վէ Բրօթէսթան սիւպեսն Տար իւթ Թալիմ ու Թէրպիյէսի միւէսսիսի Պաղտասարեան Գրիգոր էֆէնտի վէլէսի Պաղտասար, Մէհրիսի Շէրի Շէրիֆի էնվէրտ քէնտիսինին պիր կէօնա գիմմէթի մրիյէ վէ չամսիյէսի օլմասընը հագգընտա, մահալլէսի թարաֆընան մութի իլմ ու խասէրի իպրաղ իլէ, իպրարը թամմ վէ թագրիրի քէլամ էտիպ, հէր պիրի վագէ Դիրթ վէ Մօլլա Օսման վէ Ճանպազ գասէ Տանա Գրիգոր պաղէլէրի վէ թարիգի ամմ իլէ մահտուտ իքի սէօնիմէ էշճարը միւլք պիր գրթա տութ պաղէսի, վէ եկնէ մահալլէի մէգքիւրէ Զէրքէս Ալի վէ Սալիմ վէ թարաֆը սէլէսէսի թարիգի ամմ իլէ մահտուտ պին ալթը նիւզ սէքքէն պէշ զրրա պիր գրթա արսա, վէ Մարմարէի մէգպուրէ մահալլաթընան Գէվագ մահալլէսինտէ վագը Գէվագասար, Մէհրիսի Շէրի Շէրիֆի էնվէրտ քէնտիսինին պիր կէօնա գիմմէթի մրիյէ վէ չամսիյէսի օլմասընը հագգընտա, մահալլէսի թարաֆընան մութի իլմ ու խասէրի իպրաղ իլէ, իպրարը թամմ վէ թագրիրի քէլամ էտիպ, հէր պիրի վագէ Դիրթ վէ Մօլլա Օսման վէ Ճանպազ գասէ Տանա Գրիգոր պաղէլէրի վէ թարիգի ամմ իլէ մահտուտ իքի սէօնիմէ էշճարը միւլք պիր գրթա տութ պաղէսի, վէ եկնէ մահալլէի մէգքիւրէ Զէրքէս Ալի վէ Սալիմ վէ թարաֆը սէլէսէսի թարիգի ամմ իլէ մահտուտ պին ալթը նիւզ սէքքէն պէշ զրրա պիր գրթա արսա, վէ Մարմարէի մէգպուրէ մահալլաթընան Գէվագ մահալլէսինտէ վագը էթրաֆը Հաճի Նազմի Իզնի վէ Գրիգոր պաղէլէրի, վէ թարաֆընի թարիգի ամմ իլէ մահտուտ իքի սէօնիմ էշճարը միւլք պիր գրթա տ